№ 110 ԿԻՐԱԿԻ, 23 ՄԱՅԻՍԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 23 ՄԱՅԻՍԻ № 110

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
6 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

Յանձնարարվում են առեւտրական ֆիրմաներին հաշւապահներ, նրանց օգնականներ, գանձապահներ և առեւտր. այլ ծառայողներ՝ դասընթացքներն աւարտած անձերից, որոնք վկայված են իրանց գովելի գիտութեամբ և անաչառ վարքով: Դիմել՝ Թիֆլիս, Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻՆ: (չ.ու.կ) (ա) 590. 5—2

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ և ԿՈՄ." ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի «ՍԻՄԷՆՍ ԵՒ ԳԱԼՍԿԷ» ռուսական էլեքտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բեռլինի «ՍԻՄԷՆՍ ԵՒ ԳԱԼՍԿԷ» ակց. ընկ., Բեռլինի «ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԵՐՏ-ՎԵՐԿԷ» ակց. ընկ., Կոլոմնի մեքենագործական ընկ. եւ նոր. «ԿՐՈՄՊՏՆ» անգլիական գործարանի ներկայացուցիչներ:

ԷԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ Դինամօ-մեքենաներ, էլեքտրաշարժիչներ ամեն տեսակ և ուժի՝ մշտական և փոփոխ էլեքտր. հոսանքի համար: Էներգիայի յանձնումն որոշ հեռաւորութեան վրա: Քաղաքներ և մասնաւոր ձեռնարկութիւններ լուսաւորելու համար կենտրոնական կայարանի սարքումն: Տրանսֆորմատորներ: Օդամաքրիչներ ամեն տեսակ նպատակի համար: Օզոնի օդամաքրիչներ:

ԷԼԵԿՏՐ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ Մշտական և փոփոխվելիք լուսաւոր. համար մեկ և բազմաֆազ հոսանք: Երկաթուղային ազդանշան:

ՀԵՌԱԳՐԻ ԵՒ ՀԵՌԱԽՕՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ Անթել հեռագիր: Հեռագրական ապպարատներ: Ամեն տեսակ հեռախօսներ: Վտանգազոյժ ազդանշան գործիքներ:

ԼԱՄՊԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԱՂԵՂՆԱՁԵՒ լամպաներ՝ ուշագրաւ և սովորական: Տնտեսական լամպաներ «ՏԱՆՏԱԼ» և «ՄԻ-ՊԱՏՐՈՑԱՅԻՆ ԼԱՄՊԱՆԵՐ»: Լամպաներ ածխային թելով:

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեքտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեքտրական կառուցւածքների համար և այլն:
ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման:
Տէլէֆօն № 533. Հասցէն հեռագրին. համար՝ Шукертъ, Тифлисъ.
(Կ.) (ա) № 1. 433. 26—4

Թիֆլիսի ժողովարան
ԱՄԱՌԱՅԻՆ ԱՅԳԻ
Այսօր, կիրակի, մայիսի 23-ին
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ Գինէպլին:

Երեկոյթին կը նուագեն ՍԱԶԱՆԴԱՐՆԵՐ:
Հիւրերը՝ համաձայն ընդհանուր հիմունքների՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ռ., կանայք 50 կ.:
Սինեմատօգրաֆի սկիզբը երեկ. ժ. 9-ին:
ԱԶԴ.—Երեքշաբթի, մայիսի 25-ին Ընտանեկան Երեկոյթ և համերգ ռուսաց օպերային երգիչ՝ յայտնի տէնօր Ա. Ս. Կոստանեանի:
(ա.) 612. 1—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. ԱՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱՋՈՒԿԻ
Ամառը կը փոխադրվի ՍԱՆԱՀԻՆ:
Սեփական շինութիւն՝ յարմարեցված դպրոցական շէնքի համար:
Ընդունվում են երեխաներ՝ որպէս առողջութիւնը կազդուրելու, նոյնպէս և պատրաստելու բոլոր դպրոցների համար:
Ի նկատի է առնված բոլոր անհրաժեշտ յարմարութիւնները:
(ա.) 610. 1—1

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Արաս-Արագվսկայա, տուն Միրիմանովի:
(Ն. Հ. Կ.) (առ.) 1045. 100—93

ԲԺՇԿԱՊԵՏ
ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ
ըստ սովորականին, յունիսի 1-ից մինչև սեպտ. 15-ը հիւանդներ ընդունելու է ԿԻՍԼՕՎՕԴՍԿՈՒՄ (Отель Бештау):
(Հ.Կ.) առ. 611. 10—1

ԲԺԻՇԿ
Զ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆՑ
Մայիսի 1-ից ընդունում է հիւանդներ
ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ:
Ամառանոց ուսուցիչ Մ. Աւետիսեանցի:
(չ.ու.կ.) (առ.) 484. 10—10

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(Ընկիւն Իգմայլովսկայա և Օլեատապոլկ-Միրսկայա փողոցների, № 1, ապաստարան Օդնոսումովի)
կազմակերպելով, ժայռաքաղաքի բարեգործական հաստատութիւնների օրինակով,
ԱՄԷՆ ՄԻ ՏԱՆ ԱՒԵԼՈՐԴ ԻՐԵՐԻ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ,
դիմում է քաղաքի ազգաբնակութեանը խնդրելով նուիրել զանազան հին զգեստներ, ինչպէս օրինակ՝ հին կրկնակօշիկներ և կօշիկներ, զանազան կտորեղէն, լրագրի թուղթ, հին երկաթ, պղինձ, ցինկ և այլ մետաղեայ լոմ, հացի կտորներ, մոմի մնացորդներ, զանազան թիթեղեայ և այլ ամանիկներ, խաղալիկներ, շշեր և այլ ապակեղէն, զանազան չորեր ու սպիտակեղէն և այլն:
Չը պէտք է նեղվել նուէրի ոչ քանակից, ոչ որակից:
Բոլորն էլ վաճառվելու են և միջոցները կը տան պահելու և կրթելու Թիֆլիսի աղքատ երեխաներին:
Նուիրված իրերը ստանալու համար կուղարկվեն յատուկ մարդիկ:
Տեղեկութիւնների համար դիմել գրաւորապէս Իւ. Զալկիցին (Վելիկօկնեաժեսկայա, 46) և Մ. Բէլօզէրսկիին (Ծղնէթսկայա, 17, բն. 2):
(Կ.) (առ.) 386. 10—7

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

II

Թէ Ներսիսեան և թէ միւս թեմական դպրոցների համար հասել է մի պատասխանատու ժամանակաշրջան:

Այդ դպրոցները պէտք է ստանան որոշ վերջնական կազմակերպութիւն:

Հերթական է դարձել նրանց կանոնագրութեան հաստատման խնդիրը: Հերթական են դարձել մի շարք այնպիսի հարցեր, ինչպէս են բարձր մասնագիտական բաժինների բացումը, ստորին դասարանների պահպանութիւնը, գիմնազիական դասընթացքի լիակատարութիւնը, զուտ հայկական դպրութեան առարկաների դասաւանդութիւնը, դպրոցաւարտների արտօնութիւնների ծաւալը ուսուցչական իրաւունքի, բարձրագոյն դպրոցներ մտնելու, պաշտօններ ստանձնելու համար և այլն:

Մանաւանդ՝ նշանակալից է Ներսիսեան դպրոցի գրաւելիք դիրքը ներկայ դէպքում:

Եւ հասկանալի է թէ ինչո՛ւ:

Նա գտնվում է Անդրկովկասի մայրաքաղաքում և աչքի է ընկնում իր ամբողջ կեանքով ու գործունէութեամբ: Նա միևնոյն ժամանակ, ինչպէս գիտենք, օրինակ է ծառայել և մեր միւս թեմական դպրոցների համար:

Եւ ուրեմն, ինչ որ կարողանանք մշակել և շահել այդ դպրոցի համար, նա պէտք է ունենայ թէ իր մասնաւոր և թէ հանրային նշանակութիւնը:

Այդպիսի պատասխանատու ժամանակաշրջանում մանաւանդ մեծ ջանքեր պէտք է գործ դնեն մեր հասարակութեան լաւագոյն ոյժերը թէ բարեկարգ վիճակի մէջ պահելու դպրոցը և թէ աչալուրջ կերպով հետևելու, որ դպրոցական կանոնագրութիւնը խմբագրվի հեղինակօրէն, որ դպրոցական վերանորոգութիւնը գլուխ բերվի խելացի և հմտալից ղեկավարութեամբ:

Միւս կողմից վերցրէք թեմական խորհուրդները: Նրանք նորաստեղծ մարմիններ են և մինչև այժմ չեն ստացել հաստատ կազմակերպութիւն: Այն անձերը, որոնք պէտք է գործեն թեմական խորհուրդներում, պարտաւոր են և կեանք ու իմաստ տալ այդ հիմնարկութեան: Թեմական խորհրդի ջատագովութիւնները կը դառնան ոչնչութիւն և առաջ կը բերեն հիասթափութիւն, եթէ խելացի հասարակական-կրթական գործունէութեամբ մենք անկարող կը լինենք դարձնել թեմական խորհուրդները անհրաժեշտ օգտակար օրգաններ մեր եկեղեցական-վարչական և դպրոցական ասպարէզում:

Ցաւելով պէտք է յայտնել, որ թեմական խորհրդի շուրջ սկսված մտածողութիւնը և գործունէութիւնը մինչև այժմ չը տուին այնպիսի արդիւնքներ, որ մենք կարող լինէինք ծրագրել հաստատ կազմակերպութեան հիմունքներ և մնացած լինէր միայն մի ձևականութիւն, այն է՝ օրինական վաւերացում:

Եւ ահա թէ թեմական դպրոցական բարեկարգութեան ու վերանորոգութեան խոշոր հոգսը և թէ թեմական խորհուրդների նպատակայարմար կազմակերպութեան անհրաժեշտութիւնը այսօր պահանջում են մեզանից, որ մենք տանք հեղինակաւոր և խոհուն գործողներ այդ երկու կարևոր հիմնարկութիւններին:

Ընտրութիւնները, որոնք մեզ տանում են այսօր դէպի եկեղեցիները մեր ձայնը յայտնելու, մեր քուէները տալու, հրամայողաբար պահանջ են դնում մեր առաջ լինել պարտաճանաչ և ընտրել այնպիսի անձերի, որոնք զգան իրանց պարտականութիւնների վեհութիւնը և արդարև նպաստեն կազմելու գործող մարմիններ, որոնք կանգնած լինեն իրանց կոչման բարձրութեան վրա:

Այդ համոզմունքով և բարոյական տրամադրութեամբ գնանք դէպի քուէտուփերը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բեռլին, 21 մայիսի

Կայսրը իրան այն աստիճան լաւ է զգում, որ ստորագրում է թղթերը: «Նորդ-Դէյտշէ Ցայտունգը» հաղորդում է, որ լանդտագը շուտով հարց է բարձրացնելու կայսրի տարեկան թոշակը աւելացնելու մասին: Ներկայումս 1889 թիւ որոշմամբ կայսրը ստանում է 1503/4 միլլիոն մարկ: (Հ. Գ.)

—

Մոստար, 21 մայիսի

Եկաւ Ֆրանց-Յովսէփ կայսրը: Տեղի ունեցաւ հանդիսաւոր հանդիպումն: Այսօր ևեթ կայսրը մեկնեց Վիեննա: (Հ. Գ.)

—

Սերաևօ, 21 մայիսի

Յովսէփ կայսրը իր շքախմբով ճանապարհ ընկաւ շարունակելու համար իր ուղևորութիւնը: (Հ. Գ.)

—

Վիեննա, 21 մայիսի

Պատգամաւորների պալատ: Չեխ-արմատական Սօկոլը հարց տուեց ֆինլանդական գործի առիթով Դումային ուղարկվելիք դիմումի մասին: Փոխնախագահ սօցիալ-դեմօկրատ Պերներստօֆերը պատասխանեց, որ նա իշխանութիւն չունի կուսակցական հայեացքներ յայտնող պատգամաւորների վրա: Պարլամենտում դրանից յետոյ տեղի ունեցան աղմկալի ընդհարումներ չեխ արմատականների և սօց.-դեմօկրատների մէջ, որոնցից վերջիններս ստորագրում են այսօր Դումային ուղղված սեպարատիվ յուշագիրը: («Հ. Գ.»)

—

Պարիզ, 21 մայիսի

Մամուլը կատարելապէս անտես է անում պատգամաւորների խմբակի յիշատակագիրը ֆինլանդական հարցի վերաբերմամբ: Մամուլի մեծամասնութիւնը մինչև անգամ չէ հրատարակում յիշատակագրի բնագիրը: (Հ. Գ.)

—

Պարիզ, 21 մայիսի

Մինիստրների խորհրդի նիստում արտաքին գործերի մինիստր Պիշօնը հաղորդեց, որ ինքը բանակցութիւններ է վարել անգլիական և թիւրքական արտաքին գործերի մինիստրների հետ կրետական հարցի առիթով: Պիշօնը ժխտում է, թէ տարաձայնութիւններ կան Կանէայի միջադէպերի առաջն առնելու նպատակով ձեռնարկվող միջոցների մասին եղած կարծիքների մէջ: Կաբինէտների բանակցութիւնները շարունակվում են: (Հ. Գ.)

—

Պարիզ, 21 մայիսի

Վերին Սենէգալի նահանգապետը հաղորդում է, որ Հաֆֆա օազիսի 500 արաբ-աւազակներ յարձակվեցին ուղտերով անցնող զինւորների վրա: Կատաղի կռւից յետոյ զինւորները յետ մղեցին արաբներին: Սրանք կորցրին 10 սպանված և 37 վիրաւոր, զինւորները 9 սպանված և 10 վիրաւոր: (Հ. Գ.)

—

Բեռլին, 21 մայիսի

Վախճանվեց բանաստեղծ Իւլի Վօլֆը: (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Միլիւկովը և ուրիշ պատգամաւորներ շարունակ գանգատներ են ստանում մահմեդականներից՝ ծառայողների նորմալ հանգստի օրինագծի առիթով:

Պետական Խորհրդի մասնաժողովը մերժեց Կարսի ինքնավարութեան օրինագիծը, որովհետև մասնաժողովի կարծիքով ռուս ազգաբնակութեան շահերը լիովին ապահովված չեն: («Б.»)

—

Բերդիչեվ.—Քաղաքային վարկային ընկերութեան մէջ երևան հանվեց 100,000 ռուբլու վատնում. ձերբակալվեց մի հաշւապահ. դիրեկտորը և գանձապահը անյայտացել են: («Б.»)

—

Մադրիդ.—Ձերբակալվեց յայտնի անիշխանական Զօրզալը. նրա մօտ գտնվեցին 20 ուժանակի ռումբեր և շատ փող: («Б.»)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պօլիս, 21 մայիսի

Յունաց դեսպանը բողոք յայտնեց, որ Փոքր-Ասիայում երկաթուղի կառուցանելու կօնցեսիան տրված է ամերիկացի Չեստէրին: (Հ. Գ.)

—

Սալօնիկ, 21 մայիսի

Զինւորական մինիստր Մահմուդ-Շէվքէթ փաշան գլխաւոր զօրամասերով ճանապարհ ընկաւ Դիակովօ: Ապստամբները չէին պաշտպանվում: Ալբանական պատգամաւոր Նէջիբ-Դրագիի քրոջ որդի Բէքիր-բէյ ենթարկված է զինւորական դատարանին Ֆերիզօվիչում: Նրանից խլեցին նշանաւոր դօկումէնտներ, որոնցով հաստատվում են ալբանացի-նացիօնալիստների յարաբերութիւնները ապստամբների հետ: (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 21 մայիսի

Ուրմիայով և Ասիական Թիւրքիայի քաղաքներով անցաւ Մոսկվայի Ցինդէլ ֆիրմայի ներկայացուցիչը տեղական շուկաները ուսումնասիրելու նպատակով ռուսական մանուֆակտուրայի արտահանութիւնը զարգացնելու համար: (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Այսօր կատարվելու են պատուիրակների ընտրութիւնները:

Հայ ժողովուրդը պէտք է ցոյց տայ իր գիտակից վերաբերմունքը: Եթէ անկեղծ և ճիշդ է այն ընդհանուր դժգոհութիւնը, տրտունջը, որ հայ ժողովուրդն ունի դէպի՝ վերջին տարիներս մեր դպրոցական կեանքի մէջ բուն դրած նեղ կուսակցական և թայֆայական ուղղութիւնը, ապա այսօր առիթ է ներկայանում գործով և ոչ խօսքով ցոյց տալու, որ, արդարև, այլ ևս անտանելի է դարձել հայ հասարակութեան համար հանդուրժել աղաղակող չարիքը և ժամանակ է մտցնելու հոգաբարձական կազմի մէջ նոր առաջադիմական հոսանք: Մանաւանդ որ, ինչպէս ասացինք, վերջերս փոքր ինչ մաքրագործումն, մթնոլորտի մասնական առողջացումն տեղի ունեցաւ, երբ 2 տարի առաջ տեղի ունեցած ընտրութիւնների ժամանակ հոգաբարձական կազմի մէջ մտան ոչ զուտ-թայֆայականներ:

Հայ հասարակութեանը քաջ յայտնի է, որ ինչպէս այս վերջին 4 տարին գործող հոգաբարձական մարմնի ընտրութիւնը կատարվեց այնպիսի ապօրինի պայմանների մէջ, որոնք իրաւունք են տալիս ասելու, թէ այդ ընտրութեան մէջ չարտայայտվեց ընտրող ժողովրդի ազատ կամքը և գիտակցութիւնը: Դեռ մեր յիշողութեան մէջ թարմ են բռնութեան, քուէների խարդախման այն տեսարանները, որոնք տեղի ունեցան 4 տարի առաջ ընտրութիւնների ժամանակ, երբ սպառնալիք, բռնութիւն ցոյց էին տրվում և խաժամուժ, ոչ-ծխական ամբոխն էր ղեկավարում ընտրութիւնները: Այժմ, փառք Աստուծու, անցել է այդ մղձաւանջը և ընտրող ծխականը կարող է ամենայն ազատութեամբ և համոզմունքով տալ իր քուէն: Հետևաբար անհրաժեշտ է, որ ընտրող ժողովուրդն այս անգամ արտայայտէ իր կամքը և ընտրի արժանաւոր, շիտակ, նեղ-թայֆայական շահասիրութիւնից զուրկ պատուիրակներ, որպէսզի սրանք էլ ընտրեն այնպիսի հոգաբարձուներ, որոնք կարողանան հասցնել Ներսիսեան դպրոցը բարգաւաճման, բարւոքեն նրա նիւթական վիճակը, բարձրացնեն նրա բարոյական և մտաւոր մակարդակը և, որ ամենագլխաւորն է, վերջ տան այն քաօսական դրութեան, որի մէջ գտնվում է դպրոցը, չունենալով մի մշտական, օրինաւորապէս հաստատված և ամենքից ընդունված ու ճանաչված ուսման ծրագիր: Հէնց ամենամեծ մեղադրանքը, որ կարելի է բարդել անցեալ հոգաբարձութեան վրա, մի աններելի վարմունք, այն է, որ նա չօգտվեց յարմար առիթից և ժամանակից և նեղ-կուսակցական նկատումներից դրդված՝ ձեռք չը բերեց կանոնագրութիւն այն ժամանակ, երբ շատ հեշտ էր ձեռք բերել:

Այն խմբակը, որի ձգտումների արտայայտիչ է հանդիսանում այժմ «Հորիզոն» թերթը թէև ոչ բաց-համարձակ, այլ քողարկելով սոփեստական դատողութիւններով, թէ ինքը տեղ է տալիս խմբակի արտայայտութիւններին որպէս թէ այն պատճառով, որ այդ անմեղ գառն ձևացող խմբակը արտայայտվելու տեղ չունի,—չը գիտենք ինչի համար է վայնասուն բարձրացրել, որպէս թէ առաջադիմական-մշակական բանակը արշաւանք է սկսել ամբողջ հոգաբարձութեան դէմ և կամենում է ամբողջ հոգաբարձութիւնը քշել: Նախ, դա միանգամայն սխալ է. հոգաբարձուներից 6 հոգի մնում են իրանց պաշտօնի մէջ. միայն 6 հոգի նոր պէտք է ընտրել: Պաշտօնի մէջ մնացող 6 հոգին արդարև այնպիսի անձինք են, որոնց հետ առաջադիմականները կարող են գործել: Երկրորդ, ինչո՞ւ «Հորիզոնի» թերթի տակ քօղարկվող խմբակը անպատճառ կամենում է, որ նոր ընտրվելիք 6 հոգաբարձուներն էլ իրանց միջից լինեն. աւելի լաւ չէ՞, որ հոգաբարձութեան կազմի մէջ մտնեն և այլ ուղղութիւնների ու հոսանքների ներկայացուցիչներ:

Այժմ պատասխանենք և մի քանի առարկութիւնների, որ «Հորիզոնի» խմբակը անում է ի պաշտպանութիւն վերջին չորս տարվայ հոգաբարձութեան:

1) Ղազախի գիւղերին տրված 35,000 ռ. գումարը, որ տրվել է անձեռնմխելի գումարից, նախորդ հոգաբարձութեան օրով,

ամենևին կորած չէ. ապացոյց, որ նրա մեծ մասը յետ է ստացված, և մնացածն էլ կը ստացվի, որովհետև վարկ ունեցող անձինք երաշխաւոր են, բայց ներկայ հոգաբարձութիւնը փոխանակ յետ ստացված գումարները կցելու անձեռնմխելի գումարին, ընդհակառակը, ծախսել է այդ գումարը և նրանով է կամենում ծածկել իր դեֆիցիտը. 2) դպրոցի նոր շինութեան համար Ալ. Մանթաշեանի նուիրատուութեան գործի մէջ ներկայ հոգաբարձութիւնը ոչ մի արժանիք և ծառայութիւն չունի։ Դեռ նախորդ հոգաբարձութիւնների օրով դրված էր նոր շինութեան հարցը. նոյնիսկ առանձին գումար կար յատկացված։ Երբ 1906 թ. պաշտօնի մտաւ վերջին հոգաբարձութիւնը, նա յայտարարեց գոռում գոչումով, թէ այլ ևս ոչ մի պէտք չունի բուրժուազիայի և հարուստների օգնութեան, այլ պէտք է ինքը ժողովրդի օգնութեամբ, ժողովրդի լումաներով պահպանէ դպրոցը։ Եւ սակայն նա ոչ մի կոպէկ չը հաւաքեց, և ժողովուրդն էլ նրան ոչ մի կոպէկ չը տուեց, ուստի և նա, հոգաբարձութիւնը, սկսեց ձեռնամուխ լինել անձեռնմխելի գումարներին։

[illegible] գումարները, որոնց մէջ էր և նախորդ հոգաբարձութիւնների ամբարած գումարը դպրոցի նոր շէնքի համար, հոգաբարձութիւնը տեսաւ, որ, աւաղ, պէտք է դիմել դարձեալ իր արհամարհած բուրժուային և կապիտալիստին և մանաւանդ իր ատած հայ եկեղեցու ներկայացուցչի օգնութեանն և աջակցութեանն։ Եւ նա խնդրեց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին դպրոցի տեսչի հետ գնալ առ ոտս իր արհամարհած հայ կապիտալիստի, յանձին Ալեքսանդր Մանթաշեանի, և հայցել կառուցանել դպրոցի նոր շինութիւնը։ Ականատեսներ կան—հաստատ վկաներ—որոնք վկայում են, թէ երբ Գարեգին արքեպիսկոպոսը բացատրեց իրանց գալու նպատակը, բարեգործ Ալեքսանդր Մանթաշեանը ասաց արքեպիսկոպոսին. «Հայր սրբազան, մեր մէջ նոր մարդիկ են դուրս եկել, որոնք քարոզում են, թէ եկեղեցի, հոգևորականութիւն, առաջնորդ, կաթողիկոս չեն ճանաչում։ Շատ լաւ, հիմա եթէ դուք, սրբազան, եկած չը լինէիք, մի՞թէ ես կոպէկ կը տայի Ներսիսեան դպրոցին։ Բայց դուք, հայոց եկեղեցու արքեպիսկոպոս, կաթողիկոսի ներկայացուցիչ, եկել էք, և ես ձեզ մերժել չեմ կարող»։

Գարեգին արքեպիսկոպոս և ինքն Ալ. Մանթաշեան ամեն րոպէ կարող են այս խօսքերի իսկութիւնը հաստատել։

Ընդհակառակը, մենք կարծում ենք, որ Ալ. Մանթաշեան գուցէ աւելի խոշոր գումար նուիրէր, եթէ հոգաբարձութիւնն այլ լինէր։

Ինչ վերաբերում է այն զրպարտութեան, թէ երբ եղել են մարդիկ, որոնք կամեցել են խանգարել Մանթաշեանի նուէրը, դա, ի հարկէ, կատարեալ սուտ է։ Մանթաշեանին դիմումն անող անձինք, ընդհակառակը, յորդորել են նրան տալ առատ նուէր, միայն խորհուրդ են տուել նուէրը չը գործադրել Թայֆայական հոգաբարձութեան ձեռքով, որովհետև այդ հոգաբարձութեան մէջ կային մարդիկ, որոնք ոչ մի հաւատ և վստահութիւն չէին ներշնչում մաքրութեան տեսակէտից և որոնք, սակայն, ամենաներգործական դերն էին խաղում։

Մենք վերջացրինք։ Այժմ խօսքը պատկանում է ընտրողներին, և յոյս ունենք, որ նրանք 1906 թւի պէս հայկական փարախի մէջ թոյլ չեն տայ մտնելու «գիշատիչ գայլերին». իսկ թէ ովքեր են այդ «գիշատիչ գայլերը», դա հասկանալի է ամենքին։

Հ. Ա.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

Ներսիսեան դպրոցի բազմամեայ գոյութիւնը կրել է իր վրա հայկական իրականութեան մէջ գոյութիւն ունեցող մտաւոր-կուլտուրական հոսանքների զօրեղ ազդեցութիւնը։ 50-ական թւականներից հայկական ճահճացած կեանքը երբ բաղխվեց եւրոպական կուլտուրայի խաղաղ, բայց միշտ առաջ մղող գործօններին, առաջացրեց հնի և նորի պաշտպանների պայքար, երկու զօրեղ հոսանքներ, որոնք ընդլայնացան ու ընդգրկեցին գրեթէ ամբողջ հայ ժողովուրդը։ Գրական-հասարակական ասպարէզի վրա հանդէս եկան երկու տիպի գործիչներ՝ պահպանողականներ և ազատամիտներ, որոնք որոշ գունաւորում և ուղղութիւն էին տալիս հայ ժողովրդի առաջադիմութեան ծառայող բոլոր կուլտուրական հաստատութիւններին։ Մամուլն և գրականութիւնը այդ ժամանակ զօրեղ կերպով արձագանք էին տալիս պահպանողական և ազատամիտ հոսանքների գործունէութեանը հասարակական ասպարէզի վրա, մերկացնելով սխալներն ու պակասութիւններն և ջատագովելով նրանց արժանաւոր գործերը։ Պահպա- [illegible] ներկայացուցիչների ետևից ընթանում էր ժողովուրդը, որի աջակցութիւնը մեծապէս նպաստում էր երկու ուղղութեան ներկայացուցիչների գործունէութեան։ Ժողովրդական մասսաները տեսնում էին նրանց ծրագիրների և գործելակերպի մէջ ոչ թէ քայքայիչ ու կործանիչ, այլ շինարարական, ստեղծագործական տարրեր հայ ժողովրդի շահերի օգտին։ Հայ ժողովուրդը այդ ուղղութիւնների ներկայացուցիչներին համարում էր ոչ թէ ֆրազների, գրքերից հանած պատրաստ ֆօրմուլների և դօկտրինների հետևողներ ու գործադրողներ, այլ առաջադիմութեան օրէնքների և պայմանների քարոզիչներ և ջատագովներ, որոնք հայութիւնն և հայ ժողովրդի ռէալ շահերը երբէք անտես չէին անում և պահանջում էին առաջադիմել, սակայն այն մտքով, որ այդ ամենը զօրեղացնի և ամրացնի այն, ինչ որ կոչվում է հայութիւն։ Ի հարկէ կարելի է չը համակրել պահպանողական կամ ազատամիտ ուղղութեան գործիչներին, չընդունել նրանց ծրագիրները, մինչև իսկ համարել նրանց գործելակերպը վնասակար, սակայն չէ կարելի ուրանալ այն, որ այդ ուղղութիւնները ծնունդ էին հայ ժողովրդի հոգու և մտքի, ձգել էին շատ խոր արմատներ նրա մէջ, և նրանց հասարակական գործունէութեան մէջ մղած մրցումից մեծապէս շահվում էին մեր ազգային հաստատութիւնները, որոնց ժողովուրդը թէ նիւթապէս և թէ բարոյապէս մեծապէս նպաստում և աջակցում էր։

Ազատամիտների և պահպանողականների մղած պայքարն ու մրցումը իր գագաթնակէտին հասաւ 90-ական թւականներին, երբ ազատամիտները, առաջնորդ ունենալով մեծ հրապարակախօս Գր. Արծրունուն, յետ մղեցին հասարակական բոլոր դիրքերից պահպանողականներին։ Վերջ ի վերջոյ պահպանողական գործիչների առաջնորդները դուրս վտարվեցին նաև Ներսիսեան դպրոցից, իրանց վերջին ապաստանարանից, ուր վաղուց նրանք բուն էին դրել և ամեն ներելի ու աններելի միջոցներով աշխատում էին ձեռքից բաց չը թողնել վերոյիշեալ կրթական հաստատութիւնը։

Ազատամիտների աջողութեանը մեծապէս նպաստեց այն, որ 90-ական թւականներից հասարակական ասպարէզի վրա հանդէս եկաւ հայ ինտելիգենտ երիտասարդութեան ստուար խմբակ, որ բացեց ժողովրդի աչքը և առաջնորդեց նրան բուն առաջադիմական շաւղով, նեցուկ ունենալով «Մշակի» մեծ հրապարակախօսին։

Պահպանողականների պարտութեան գլխաւոր պատճառներից մէկն էր և այն, որ նրանց շարքերից չքացել էին արդէն գաղափարական գործիչները, իսկ նրանցից դեր կատարել և ազդեցութիւն ունենալ էին ուզում գրական-հասարակական գործչի անուան տակ գրչի աւազակներն և գրական աֆերիստները։

Վերջին տարիները հայկական դառն իրականութեան ասպարէզի վրա հանդէս եկաւ գործիչների մի նոր խմբակ, որ ոչ մի կապ չունէր ժողովրդի հետ, չէր վայելում նրա համակրանքը և, յենված՝ փափախի ու բռունցքի հեղինակութեան վրա, ասպարէզ նետվեց ու գրաւեց բոլոր մեր հասարական և կրթական հաստատութիւնները շնորհիւ այն բանի, որ ամեն տեղ ընտրութիւններում մասնակցում էր ոչ թէ ժողովուրդը, որ միանգամայն հիասթափված այդ խմբակից՝ դիտողի դերն էր ստանձնել, այլ մարզված փափախաւորների վոհմակները…

Իսկ ի՞նչ էր այդ տիպի գործիչների ծրագիրը։ Կարդացել ու իմացել են, որ եկեղեցին վնասակար հաստատութիւն է, ուրեմն պէտք է կործանել հայ եկեղեցին և նրա ներկայացուցիչներին։ Կարդացել ու իմացել են, որ բուրժուազիան վնասակար դա- [illegible] պէտք է ոչնչացնել հայ բուրժուային։ Սակայն երբ կարիքը ստիպեց փող ճարել Ներսիսեան դպրոցի շէնքի համար, այդ տիպի գործիչները մտան հայ եկեղեցականի փարաջայի տակ և ուխտագնացութիւն արին հայ ամենամեծ բուրժուային, աղաչեցին, պաղատեցին և միմիայն փարաջայի շնորհիւ ստացան գումարներ դպրոցական շէնքի համար։ Եթէ նրանց ծրագիրների և իղձերի համաձայն չը լինէր ոչ հայ եկեղեցի, ոչ էլ եկեղեցական և հայ բուրժուա, չը գիտեմ ո՞վ պէտք է նուիրէր հարիւր հազարներ։

Ահա այդ խմբակի դաստիարակած ու կրթած սերունդի պտուղները լի ու լի վայելում է հայ ժողովուրդը։ Վերջերս մեր առանց այն էլ դառնացած կեանքի մէջ տեղի են ունենում այնպիսի դէպքեր, որոնք անցեալում ոչ մէկի մտքովն անգամ երբէք չէին անցնի։ Սուխումի շրջանի եկեղեցին, Կ. Պոլսի եկեղեցիները, Վանի շրջակայքի դպրոցներում պատահածները, Բաքւում հայ ուսուցչի վարմունքը, Ճեմարանում այժմ տեղի ունեցող տգեղ երևոյթը, երբ Վեհափառը նշանակված ճիշդ ժամը 6-ին գալիս է ճեմարան, մտնում դասարան քննութեան ներկայ լինելու, իսկ դասարանում ոչ ուսուցիչ կայ, ոչ էլ աշակերտ…

Ահա թէ ինչ են արել կամ հէնց այժմ էլ անում են մեր Թայֆայականները, որոնց խմբակը ներկայացնում է մի տեսակ Արշակաւան, ուր ամեն մէկը ազատ մուտք կարող է ունենալ, միայն թէ առնի իր վրա Թայֆայականութեան դիմակը և ասպարէզ նետվի անելու այն, ինչ որ արել են ամեն տեղ, ուր որ Ջուխտակէնտ հայ կայ, մեր ինքնակոչ փրկիչները, որոնք փրկում են մեզ միայն թէ՝ ըստ Գօգոլի՝ „съ другой стороны".

Կալխաս

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղալաչա, 20 մայիսի

Գիւղական կեանքի ամենահիւանդոտ կողմերից մէկը գողութիւնն է կազմում։ Մինչև հանգուցեալ Արնոլդի գաւառապետ նշանակվելը գողութիւնն իր զարգացման գագաթնակէտին էր հասել, բայց նրա ձեռք առած խելացի և խիստ միջոցների շնորհիւ վերջացաւ։ Արնոլդի հեռացումից յետոյ նորից վերսկսվեց գողութիւնը, բայց գաւառապետ Ռէուտը ծանօթ լինելով Վանօ-բէգի և Շահնիար-բէգի օրինակելի ծառայութեանցը պրիստաւներ նշանակեց նրանց՝ գողութիւնը սարսափելի տարածված տեղերում, և սրանց շնորհիւ էլ գողութիւնն այս անգամ վերջացաւ։ Ճիշդ է, հայերից ևս գողութեամբ պարապողներ կային, բայց Թուրքերն անխտիր առանց դասակարգի խտրութեան բոլորն էլ սիրահար են այս արհեստին և հետևապէս այսպիսի մարդիկ դուր չէին գալիս սրանց։ Գիւղացիները մի քանի անգամ դանօսներ գրեցին այդ անձերի մասին, բայց ոչ մի հետևանքի չը հասան։ Վերջերս յարմար առիթից օգուտ քաղելով, նորից դանօս էին գրել Վանօ-բէգից Գանձակի նահանգական դատախազին, որ իբր թէ Վանօ-բէգը իր բանտարգելութեան ժամանակը փոխանակ Ղազախի բանտում անցնելու՝ փողոցներում ամբողջ օրերով շրջում է։ Դատախազը այդ առիթով սրանից մօտ մի ամիս առաջ եկաւ Ղազախ, քննութիւն կատարեց, և Վանօ-բէգն իր ժամանակը լրացնելուց յետոյ անմիջապէս դուրս եկաւ։ Այժմ Վանօ-բէգը պրիստաւութիւն չէ անում։ Հաստատ աղբիւրից իմացայ, որ գաւառապետը նորից դիմել է նահանգապետին, վերստին Երալեանցին իր նախկին պաշտօնում հաստատելու, հակառակ դէպքում ամբողջ 2 մասի գիւղերը տուժելու են։

Մելքիսեդէկ քահ.

—

Հիսնես գիւղ (Վարանդա), 6 մայիսի

Մեր գիւղացիք ապշանքով լսեցին, որ Սխտորաշէնում վերջերս մի քահանայ իր կնոջ մահից յետոյ անմիջապէս ամուսնացել է մի աղջկայ հետ, ի հարկէ ապօրինի կերպով։

Սա երկրորդ դէպքն է, որ պատահում է Վարանդայում և գիւղացիութեան խաղաղ մտքերն ալեկոծում։ Գեղջուկ ժողովրդի օրվայ խօսակցութեան առարկան այդ իրողութիւնն է։

Անցորդ

—

Սուխում, 18 մայիսի

Սուխումի ծխ. դպրոցը բաղկացած է 3 դասարանից. նրա մէջ սովորում են մօտ 80 աշ.-աշակերտուհի։ Տնտեսականի կողմից այնքան էլ բարելաւ վիճակի մէջ չէ, սակայն շնորհիւ եռանդուն հոգաբարձութեան ջանքերի՝ ամեն ամիս ուսուցիչների ռոճիկը տրվում է կանոնաւոր կերպով և նոյնիսկ հարկ եղած դէպքում ուսուցիչները ստանում են աւանսով։

Ուսուցչ. խումբը բաղկացած է 2 ուսուցչից և 1 ուսուցչուհուց։ Աւագ-ուսուցիչ չը կայ, այլ ուսուցիչներն ուսումնական գործը տանում են ընկերական հիմունքների վրա։ Այս դրութեան անյարմարութիւններն ակներև եղան մեզանում այս տարի։ Պէտք է յուսալ, որ հոգաբարձութիւնն էլ, փորձված այս տարվայ փորձից առաջիկայ ուսումն. տարում դպրոցի ուսումնական մասն առանց ներկայացուցչի չի թողնի։

Ծխական

—

Ղազանչի (Հին-Նախիջ. գ.), 11 մայիսի

Մեր գիւղում ներկայումս գտնվում է մօտ 13 տարեկան մի տղայ՝ Արմենակ անունով. նա կորած կամ մեռած է համարվում ծնողների համար. Արմենակը, իրա պատմելով, Պարսկաստանի Ղարադաղի Խանագեա գիւղից է, Մուժամբարից երկու օր գընը։

«Հայրս յիշեալ գիւղի ուսուցիչ Մովսէս Տէր-Կարապետեանցն է,—պատմում է Արմենակը,—ես 7—8 տարեկան հարևանների հետ պանդխտեցի Թաւրիզ։ Հայրս թոյլ տուեց՝ ասելով. «Գնա՛ օտարութիւն, մարդ դարձիր»։ Թաւրիզում 4 տարի ծառայեցի Ջաւադ-բէկ Ջոհրաբ-բէկեանցի մօտ, որ ծառայում էր Թումանեանցների կօնտօրում։ Ծառայեցի և ոչինչ չը ստացայ։ Թաւրիզի կռիւների ժամանակ ես էլ փախայ ու ընկայ Ռուսաստանի սահմանի մօտ։ Ջուլֆայից երկաթագործ Կարապետը եկաւ ինձ տեղափոխեց Ռուսաստան, և 5 ամիս Ջուլֆայում ծառայեցի Կարապետի մօտ նոյնպէս ձրի։ Ջուլֆայից անցայ Ապրակունիս գիւղը և մի տարի ծառայեցի Մաթէոս Մինասեանցի մօտ, իսկ 5 ամիս Կարապետ Արզումանովի մօտ։ Առաջինից ստացայ մի տարվայ վարձ 8 ր., և վերջինը, որ պիտի վճարէր 7 ր. 50 կ., չը տուեց և ոչ մի կոպ.։ Մեր տանը Հռիփսիմէ մայրս, ուսուցիչ հայրս, երկու եղբայրներս՝ Վաղարշակն ու Հայկը, քոյրերս՝ Արուսեակն ու Սաթենիկն այժմ ինձանից կարօտում և լաց են լինում. բա՛ ես ոնց եմ կարօտում, չեմ կարող ասել…»։ Եւ պատանին այս ասելով դառնապէս լաց եղաւ։ Արմենակը գտնվում է մեր գիւղում՝ Սարուխան Մելիք-Յարութիւնեանցի խնամակալութեան տակ. հասցէն՝ Селеніе Казанчи, Нахичеванскаго уѣзда, Саруxану Меликъ-Арутюнову.

Ա. Տէր-Ստեփաննոսեանց

—

Գանձակ, 20 մայիսի

Մեր գաւառի Փիր գիւղի հասարակութիւնը պատրաստվում է մի քանի շաբաթ առաջ մահացած Մ. քահ. Մամիկոնեանցի տեղ նոր քահանայացուի ընտրութիւն կայացնել, աչքի առաջ ունենալով երկու թեկնածուի, որոնք, մեր կարծիքով, այնքան էլ համապատասխան չեն լինի իրանց կոչմանը, եթէ ի նկատի ունենանք, որ հարկաւոր է որոշ ուսում ստացած քահանայ ունենալ։

Գիւղում գոյութիւն չունի երիտասարդութիւն ասված բանը, որովհետև եղածը դիմում է դէպի օտարութիւն, ուր բոլորովին չէ էլ մտածում հայրենի գիւղի մռայլ իրականութիւնը գոնէ փոքր ինչ բարեփոխելու մասին։

Փիրեցին դեռ ենթակայ է տանուտէրների, քեօխվաների, կուլակների ու գզիրների քաջագործութիւններին։

Գիւղն ունի երկու դպրոց, ծխական և պետական, որոնք սպանիչ խաւարի միջից որպէս փոքր կայծեր փայլում են իրանց սաներով ու դասատուներով, մեծ յոյս ներշնչելով ապագայի նկատմամբ։ Բայց այդ փրկարար հիմնարկութիւնները չունեն ձեռնհաս ու արժանաւոր կրօնուսոյց։

Փիրը եթէ կամենայ, ամենայն հեշտութեամբ կարող է երկու կրթված ու ձեռնհաս քահանայ ունենալ։ 800 տնից բաղկացած գիւղը կարող է այդ համակրելի նպատակի համար գանձել 1,600 ր., յատկացնելով իւրաքանչիւր տանը տարեկան 2-ական ր. տուրք։

Եթէ թեմականաւարտը 4—500 րուբլով սիրով յանձն է առնում մեր գիւղերում ուսուցչութեան պաշտօն վարել, ես հաւատացած եմ, որ նա աւելի ուրախութեամբ յանձն կառնի 800 ր. քահանայագործել, առանց Մաշտոցի վրա փող մուրալու։

Այս խնդրի վրա Փիր գիւղի բանիմաց տարրն ուշադրութիւն պիտի դարձնի, գիտակցելով որ վանական դպրոցաւարտները չեն կարող ներկայ դարի պահանջներին բաւարարութիւն տալ և կարգին առաջնորդ լինել մի հասարակութեան համար, որին հարկաւոր են լոյս ու սրտացաւ առաջնորդներ։

Ցանկալի էր, որ Փիրը առաջին օրինակը տար մեր շրջանի գիւղերին, իրանից հեռու վանելով վանականներին և ընտրելով մի ձեռնհաս և ժամանակի պահանջներին համապատասխանող անձն և մտցնելով քահանային ռոճիկով վարձատրելու կարգը։

Սարգօ

—

Վլադիկավկազ, 18 մայիսի

Մայիսի 13-ին տեղս ժամանեց Աստրախանի թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը։ Սրբազանին փառաւոր ընդունելութիւն ցոյց տրվեց։

Ամսիս 14-ին, Նորին Մեծութիւններ Կայսրի և Կայսրուհու թագադրութեան օրը, Մխիթար եպիսկոպոսը տեղիս հայոց եկեղեցում, պատարագից յետոյ, գոհաբանական մաղթանք կատարեց և քարոզ խօսեց։

ՖԵԼԻԵՏՈՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆ

Լրա-գրական բոլոր ձևերից ամենից աւելի սիրում եմ ինտերվիւն*), երբ օրվայ հերոսին կամ մի մեծ մարդու խօսեցնում ես ճակատ առ ճակատ և նրա ասածները ճշդութեամբ արձանագրում ես։

Սակայն թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար, խնդրեմ ինտերվիւն չը շփոթել խօսակցութեան այն ձևի հետ, որ մի ամիս առաջ արեց մի ոմն, կարծեմ, Խաչատրեան՝ Ցալտայից բանաստեղծ Ա. Ծատուրեանի մասին, երբ դուրս էր գալիս, որ դա աւելի շուտ Ծատուրեանի ինտերվիւն էր Խաչատրեանին, քան ընդհակառակը։

Եւ որովհետև այսօր մեր օրվայ հերոսները Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներն են, ուստի և ես պարտք համարեցի դրանցից մէկին ինտերվիւի ենթարկել։

Հերոսիս ոչ արտաքինը կը նկարագրեմ, ոչ ներքինը, որովհետև այդ երկու կողմից էլ նա առանձին ոչինչ բան չէ ներկայացնում. միայն այսքանը կասեմ, որ իմ հոգաբարձուն այն մարդկանցից է, որոնց մասին ընդունված է ասել՝

— Լաւ տղայ է, բայց…

Եւ այսպէս՝ ես դարձայ այդ «լաւ տղին», և առաջին հարցը, որ տուեցի նրան, հետևեալն էր.

— Ի՞նչ պէտք է հասկանալ «անձեռնմխելի գումար» ասելով։

Հոգաբարձուս, չը գիտեմ ինչու, խիկոյն, մինչև ականջների քօքը, կարմրեց։

—Ներողութիւն,—ասացի նրան,—խնդրեմ ուրիշ բան չը հասկանաք… ոչ մի ակնարկ, ոչ մի կասկած չունեմ այդ մասին, այլ միայն ուզում եմ իմանալ, թէ ձեր «կոլլեգիայի» մէջ «անձեռնմխելի գումար» տերմինի տակ ի՞նչ է հասկացվում։

Հոգաբարձուիս գոյնը տեղն եկաւ։

— Ինչո՞ւ էք այդ հարցն ինձ տալիս. գնացէք Հայոց Դրամատիկական Ընկերութիւն և նրա նախկին վարչութիւնից հարցրէք։

— Այսինքն ինչպէ՞ս,—չը հասկացայ ես։

— Հարցրէք նրանց, թէ ո՞ւր է «Թատրոնական ֆօնդի» անձեռնմխելի գումարը, ո՞ւր է «Մակարեանի մրցանակաբաշխութեան» անձեռնմխելի գումարը. և եթէ մենք այսօր անձեռնմխելի գումարները ծախսել ենք, դա լոկ նրա համար, որ…

— Ո՞ր,—զարմացայ ես։

— Ահա այնտեղ՝ Դրամատիկականի մէջ տեսանք և սովորեցինք, որ «անձեռնմխելի գումար» անուանվում են այն բոլոր գումարները, որոնք ամենից շուտ և ամենից հեշտ են ձեռնմխելի դառնում և… գոլորշիանում։

Ես այս պատասխանից բոլորովին գոհ մնացի, բայց հոգաբարձուս դրանով չը բաւականացաւ, այլ բացելով իրանց տպած «Տեղեկագիրը»՝ կարդաց վերատեսուչին յանձնաժողովի հետևեալ կարծիքը անձեռնմխելի գումարների մասին. «Վերատեսուչին յանձնաժողովս,—գրված է այդ պատմական թղթի մէջ,—հեռու է այն մտքից, որ անձեռնմխելի կոչված գումարները պէտք է պահվեն անձեռնմխելի այս բառի նեղ մտքով. սակայն այդ գումարներից ծախսված իւրաքանչիւր կոպէկ իր… մեղմացուցիչ հանգամանքը պէտք է ունենայ»։

Ես այլ ևս չը կարողացայ ծիծաղս պահել և մի կուշտ ծիծաղեցի. հոգաբարձուս մնացել էր շուարած։

— Ասացէք խնդրեմ, ձեր վերատեսուչին յանձնաժողովի անդամները «Խաթաբալայի» աշխատակիցներ հօ չե՞ն։

— Կարծեմ, չէ,—պատասխանեց հոգաբարձուն.—բայց ինչո՞ւ էք այդպէս կարծում։

— Ի՞նչպէս թէ ինչու. մի՞թէ չէք նկատում, որ այդպիսի բացատրութիւն անձեռնմխելի գումարների մասին՝ կարելի է տալ միայն «Խաթաբալայում», բայց յամենայն դէպս ոչ թէ պաշտօնական թղթի մէջ և այն էլ… վերահսկող մարմնի կողմից։

— Ահա տեսնո՞ւմ էք,—սիրտ առաւ մեր հոգաբարձուն,—տեսնո՞ւմ էք, որ այդ հարցի մասին կարելի է բոլորովին տարբեր կարծիք ունենալ. անձեռնմխելի… ի՞նչ խօսք է դա. անձոռնի, անմիտ, անգործնական. այդպիսի խօսք կարող էին ստեղծել միայն հին ռէժիմի ժամանակ, ռէակցիայի օրերին. դա, անկասկած, բիւրօկրատիայի ստեղծած խօսքն է. տեսնո՞ւմ էք, որ նոյն իսկ մեր դատաւորները գալիս են և ասում, որ այդ բանը պէտք է հասկանալ ոչ բիւրօկրատիկ նեղ մտքով, այլ լայն, շատ լայն, ազատագրական. ուրիշ խօսքով, այդ գումարները կարող են և պէտք է դառնան ձեռնմխելի, մանաւանդ երբ կայ մէջ տեղը «մեղմացուցիչ դէպք յանցանաց»։

Մեր հոգաբարձուն այնքան ոգևորվել էր իր տուած բացատրութեամբ, որ ինձ մեծ ջանքեր էին հարկաւոր՝ նրան լռեցնել ստիպելու։

— Այժմ թոյլ տուէք ինձ մի այլ հարց,—դիմեցի ես հոգաբարձուին։

— Խնդրեմ, խնդրեմ, հարցրէք։

— Ի՞նչ է նստում ամեն մի աշակերտ դպրոցի վրա։

Հոգաբարձուս աչքերը չռեց։

— Ճիշդն ասած, այդ հարցը մենք մեզ չենք տուել։

— Ուրեմն թոյլ կը տաք, որ ես ձեզ ասեմ,—ասացի ես։

— Խնդրեմ, խնդրեմ, դա շատ հետաքրքրական է,—պատասխանեց նա ջենտլմէնօրէն։

— Ներսիսեան դպրոցը, ըստ ձեր տեղեկագրի, տարեկան ծախսում է 93,000 ր.։

Հոգաբարձուս զարմանքից տեղից վեր թռաւ։

— Ի՞նչ էք ասում, դա անկարելի է, և եթէ միայն ճիշդ է, շատ հետաքրքրական է։

— Այո, այո, պ. հոգաբարձու, տարեկան 93,000 րուբլի. և նրանում սովորում են ընդամենը 450—460 աշակերտ։

— Այդքան քի՞չ,—զարմացաւ հոգաբարձուն։

— Այնպէս որ իւրաքանչիւր աշակերտ տարեկան նստում է 207 րուբլի,—բացատրեցի ես։

— О, это ужасно!—բացականչեց հոգաբարձուն։

— Իսկ պետական գիմնազիաներում ամեն մի աշակերտ նստում է ընդամենը 135—165 րուբլի։

— Интересно, շատ հետաքրքրական է,—ասում էր հոգաբարձուն, «Տեղեկագիրը» շուռ ու մուռ տալով։

— Իսկ գիտէ՞ք թէ տարեկան հարիւր հոգուց քանիսն են ձեր դպրոցում յետամնաց։

— Ներողութիւն,—ասաց հոգաբարձուն,—մեզանում յետամնաց աշակերտ չը կայ. բոլորն էլ առաջադիմական են։

— Այո, բայց, ըստ ձեր տպած տեղեկագրի, տարեկան նոյն դասարաններում մնում են հարիւրից 33 հոգի, իսկ առաջին դասարանում նոյնիսկ հարիւրից 47 հոգի։

— О, это ужасно, даже преступно!—բացականչում էր մեր հոգաբարձուն։

— Այնպէս որ,—շարունակեցի ես,—այդպիսի առաջադիմութեամբ դուք ամեն տարի կորցնում էք ձեր ծախսած գումարի մի երրորդը, այն է՝ 31,000 րուբլի, այսինքն գրեթէ երկու թեմական դպրոցների՝ Երևանի և Շուշու ողջ տարեկան բիւջէն միա-

---

*) Սատանան տանի. հայկական ուղղագրութեան մասին այնքան թեր ու դէմ գրեցին, որ ես ինչ որ գիտէի՝ էն էլ մոռացայ. հիմա չը գիտեմ, ճիշդ եմ գրել թէ ոչ. գրածս ինտերվիւ է, ինտերվիւ է, ինտերվիւէ է, թէ ինչ գահրումար է. յամենայն դէպս ուզում եմ ասել՝ интервью. Ս.-Մ.

Կիրակի, մայիսի 16-ին, եկեղեցում ասեղ ձգելու տեղ չը կար:

Տեղիս հայ հասարակութիւնը ամիսներ շարունակ զուրկ է մնում հայկական ներկայացումներից, համերգներից, և այլն: Այդ բանում մեղաւոր է ինքը տեղիս հասարակութիւնը: Ինչ ասել կուզի, որ բարձր դասակարգը օգտվում է ռուսաց ներկայացումներից: Այսպիսի պայմաններում, ի հարկէ, մնում է միայն եկեղեցին, ուրտեղ Վլադիկավկազի հայը կարողանում է ստանալ մի փոքր հոգեկան մխիթարութիւն, այն էլ՝ շնորհիւ ինտելիգենտ քահանայի և և մի խումբ սիրողների քառաձայն երգեցողութեան:

Կիրակի օրվայ պատարագին սրբազանը քարոզ խօսեց և ի միջի այլոց ասաց, թէ ինքը մի-երկու օրից կը թողնի Վլադիկավկազը, բայց իր «միակ խրատը, աղաչանքն ու խնդիրն այն է, որ Վլադիկավկազի մի բուռն հայութիւնը հետևի մեր դպրոցական-եկեղեցական և առհասարակ հասարակական գործերին...»:

Սրբազանը տեղիս պետական մի քանի միջնակարգ դպրոցներում ներկայ է եղել հայոց լեզուի և կրօնի քննութիւններին:

Թափառական

ԶԵՄՍՏՎԱՅԻՆ ՏՈՒՐՔ

Անդրկովկասի զեմստվային նախահաշիւը կազմելու ժամանակ առաջիկայ եռամեակի համար, քաղաքներում անշարժ կայքերի զեմստվային տուրքի քանակը որոշված էր 732,500 ր., այսինքն նոյնքան, ինչքան որ պետական հարկն է:

Զեմստվային տուրքը օրէնքով ընկնում է պետական հարկերը վճարողների վրա համեմատական չափով: Մինչդեռ պետական հարկի քանակը աւելանում է տարէ-տարի. այսպէս՝ 1908 թ. այդ հարկը Կովկասի համար (հաշւելով նաև Թերեքի և Կուբանի շրջանները) որոշված էր 892,000 րուբլի, 1909 թ. 898,000 ր., իսկ 1910 թ. 996,000 ր.: Այդ գումարից 822,000 րուբլին բաժին է ընկնում Անդրկովկասին: Իսկ զեմստվային տուրքը Անդրկովկասի համար մնում է 732,500 րուբլի:

Այդ գումարի համեմատական բաժանումից պարզվեց, որ պետական հարկի 1 րուբլուն գալիս է 89 կոպէկ զեմստվային տուրք:

Այս ստորաբաժանումը մօտ օրերս հաստատվեց կովկասեան գլխաւոր իշխանութիւնից և ներկայանում է այս կերպ. զեմստվային տուրքը ընկնում է—Բաթումի շրջանին՝ 49,900 ր., Դաղստանի շրջանին՝ 26,730 ր., Կարսի շրջանին՝ 10,250 ր., Բագուի նահանգին՝ 289,600 ր., Գանձակի նահանգին՝ 33,860 ր., Քութայիսի նահանգին՝ 29,400 ր., Թիֆլիսի նահանգին՝ 225,450 ր., Չերնօմորի՝ 21,400 ր., Երևանի՝ 33,860 ր. Զաքաթալայի վիճակին՝ 1,350 ր., Սուխումի վիճակին՝ 10,700 ր.:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 21 մայիսի

Նախագահում է Գուչկովը: Մինիստրների օթեակում են մինիստրների խորհրդի նախագահը, արդարադատութեան մինիստրը, պետական կօնտրօլը, ֆինլանդական գեներալ-նահանգապետը:

Կոմս Բենիկսենը զեկուցանում է Ֆինլանդիային վերաբերեալ համապետական օրէնքների հրատարակութեան կարգի օրինագծի խնդրով զբաղվող մասնաժողովի եզրակացութիւնը: Ընդգծելով, որ նախագիծը ներկայացված է համաձայն մարտի 14-ի մանիֆեստում արտայայտված Բարձրագոյն կամքի, և պարզելով հարցի պատմութիւնը և կառավարական նախագծի ու մասնաժողովի արած փոփոխութիւնների էութիւնը, զեկուցանողը կարծում է, որ ներկայ ձեռնարկութիւնը ոչ թէ սուր կերպարանք կը տայ, այլ, ընդհակառակ, կը թուլացնէ ֆինլանդացիների թշնամութիւնը դէպի Ռուսաստանը: Համարելով նախագիծը նպատակայարմար ու օրինաչափ, զեկուցանողը վերջացնում է դիմելով ֆինն ժողովրդին, կոչ ուղղելով նրան մտնել ռուս ժողովրդի գրկութեան մէջ և յիշել, որ ազգային շահեր ու զգացմունքներ գոյութիւն ունեն ոչ միայն ֆինլանդացիների մօտ, այլև ռուս ժողովրդի մօտ, ուստի և ներկայ վէճում պէտք է ինքը զիջէ, յիշելով որ համապետական գործերի յետագայ քննութիւնը ռուսական օրէնսդրական հաստատութիւններում ֆինն ժողովրդի ներկայացուցիչների մասնակցութեամբ ցոյց կը տայ, որ ֆինլանդական կուլտուրան և ազգային շահերը կը պահպանվեն (ծափահարութիւն կենտրոնից):

Օրինագիծը յայտնված է շտապողական:

Շտապողականութեան դէմ հանդէս է գալիս Միլիւկովը, մատնանշելով՝ թէ միայն մօրալ հեղինակութիւնից զուրկ և պետական իրաւագիտակցութիւնը կորցրած մեծամասնութիւնն է, որ պահանջում է շտապով քննել առաջին օրէնսդրական ակտը, որի լուծման համար է հրաւիրված ինքը Դուման: «Կորստի մատնէք ձեզ, եթէ կամենում էք. մենք այդ բանում չենք մասնակցում» (ծափահարութիւն օպպօզիցիայում):

Ֆօն-Անրեպը, յորդորելով Դումային որքան կարելի է խոշոր մեծամասնութեամբ ընդունել շտապողականութիւնը, բողոքում է Միլիւկովի այն ասածի դէմ՝ թէ Ֆինլանդիան մի երկիր է, որ ունի իր պետական ֆունկցիաները, և պնդում է, որ երբէք ռուսական պետութեան սահմաններում չէ եղել, չը կայ և չի էլ լինի ֆինլանդական պետութիւն (ծափեր ձախից և աջից):

186 ձայնով ընդդէմ 120-ի շտապողականութիւնը ընդունվում է:

Գեգեչկօրին կարծում է, որ Դումայի մեծամասնութեան ազդանշանն է՝ կռիւ մղել այլազգիների դէմ: Լեհաստանի, Վրաստանի, Ֆինլանդիայի օրինակներով հռետորը համոզում է, որ Դումայի մեծամասնութիւնը ընթանում է ծայրերկիրներին ճնշելու և բռնանալու ճանապարհով: Միթէ կարող է իրաւունքի հիմունքներում պետական յեղաշրջումը իրաւագիտական արդարացումն գտնել (ծափ. ձախից):

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր Թիֆլիսի բոլոր լուսաւորչական եկեղեցիներում նշանակված են ծխական ժողովներ՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներ ընտրող պատուիրակների ընտրութեան համար:

◆ Մեզ հաղորդում են, որ եթէ այսօր Մողնու եկեղեցում Ներսիսեան դպրոցի հոգաբարձական պատուիրակների ընտրութեան համար ծխական ժողով չը կայանայ ծխականների օրինական թիւ չը լինելու պատճառով, այն ժամանակ կայանալու է ծխական ժողով, իբրև շարունակութիւն նախընթաց ծխական ժողովի, ուր քննութեան կառնվեն նախորդ ժողովից մնացած խնդիրները՝ վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը Գայիանեան դպրոցի և եկեղեցու հաշիւների մասին և երեցփոխի ընտրութիւն:

◆ Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան ամենաողորմածաբար թոյլատրեց խուլ ու համրերի հոգաբարձութեան Թիֆլիսի բաժանմունքը վերակոչել անդրկովկասեան բաժանմունք, տարածելով նրա գործունէութիւնը Քութայիսի, Երևանի, Գանձակի և Բագուի նահանգների, Բաթումի ու Կարսի շրջանների և Սուխումի ու Զաքաթալայի վիճակների վրա:

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատան ծառայող Վէբէրի գործը, որ նորերս եղերական վախճան ունեցաւ ինժեներ Կոլիւբակինի ձեռքով, յանձնված է Թիֆլիսի նահանգական դատարանի կարևոր գործերի քննիչին:

◆ Կ. Հ. Բ. Ը. Խորհուրդն արդէն ստացել է հանգուցեալ Ե. Գ. Ջօհրաբեանի կտակի համաձայն նրա կտակակատար Մ. Սուլխանեանից 4800 ր. 70 կ.: Ընկերութիւնն ստացել է նոյնպէս որպէս նուէր՝ Թիֆլիսի Բաղ. Վարկային Ընկ. վարչութիւնից 150 ր. և Հաջի-Բաբա Ալիևից յօգուտ որբանոցի՝ 10 փունտ թէյ:

◆ Ինչպէս տեղեկանում ենք, յունիսի 4-ին Հաւլաբարի հասարակական կլուբի դահլիճում տեղի է ունենալու Ա. Ի. Խատիսեանի հրապարակական դասախօսութիւնը քաղաքային տնտեսութեան նիւթի մասին:

◆ Այսօր Զուբալովի Ժողովրդական Տանը Ա. Եւանգուլեանը դասախօսութիւն կը կարդայ «Մեծ Արարատի գագաթը բարձրանալու մասին»: Սկիզբն է ց. ժ. 11-ին:

◆ Վերադարձաւ Պետերբուրգից անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ.-մ. Նէյգեբաուէրը, որ մասնակցեց 1911 թ-ի երկաթուղային նախահաշւի քննութեան:

◆ Անցեալ օրը Թիֆլիսի նահանգապետը անձամբ անակնկալ մտաւ մի քանի ոստիկանատներ քննութիւն կատարելու համար:

◆ Մայիսի 26-ին Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում Ալ. Քալանթար զեկուցում կը կարդայ կենդանաբանութեան բիւրօ հաստատելու մասին և Կանչէլը՝ Անդրկովկասում բայօնական մեքենափորձական կայան հիմնելու մասին:

◆ Մայիսի 21-ից պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքը իր դրամները սկսել է փոխադրել նոր շինութիւնը: Ամբողջ ճանապարհին կանգնում են շատ ուժեղ պահակախմբեր:

◆ Առևտրական հաստատութիւնների ծառայողների նօրմալ հանգստեան խնդիրը լուծում ստանալով, ներկայումս գործադրվում է նաև Թիֆլիսում: Քաղաքի պատերին արդէն կպցրել են պատշաճ հրահանգներ: Խնդրով զբաղվող մասնաժողովը ամեն շաբաթ նիստ է գումարում և տեղեկութիւններ է ժողովում ամեն տեսակ առևտուրի ու արդիւնաբերութեան մասին:

◆ Մայիսի 30-ին Մուշտայիդում կը կայանայ զբօսանք Ժողովրդական Տան երաժշտասէրների ընկերութեան օգտին:

◆ Մայիսի 27-ին «Սպորտ» այգում տեղի կունենայ զբօսանք Կ. Հ. Բ. Ընկ. օգտին:

◆ Պրոֆ. Արտէմիէվը Թիֆլիս կը գայ յունիսի 5-ին: Մինչ այդ պատրաստ կը լինի քաղաքային նոր էլեքտրական կայարանի շինութեան յատակագիծը:

◆ Բանտից ազատվեց վրացական «Մեգօբարի» լրագրի նախկին խմբագիր երդ. հաւ. Ըցխիլաձէն:

◆ Այսօր, կիրակի, ժամը $12^1/_2$-ին, Զուբալովի Ժողովրդական Տան մէջ դօկտոր Ղամբաշիձէ կը կարդայ մի դասախօսութիւն վրացերէն «Մարդկային օրգանիզմի թշնամիները» վերնագրով:

◆ Այսօր տեղի կունենան գարնան վերջին ձիարշաւները:

◆ Մինչև մայիսի 20-ը Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորակոչութեան ատեանը ցուցակում մտցրել է այս տարվայ համար 526 քրիստոնեաների (որոնցից 338-ը տեղացիներ են), 8 հրէաների, 3 մահմէդականների և 14 աղանդաւորների:

◆ Շուշու քաղաքագլուխ Քալանթարեանի կեանքի դէմ մահափորձ կատարող և նրա որդի Աղամալեանին սպանող յանցաւորներից Յովհաննէսը զինուորա-նահանգական դատարանից դատապարտվեց մահվան պատժի, իսկ Խաչատուրը՝ 15 տարով տաժանակիր աշխատանքների:

◆ Ախալցխայից մեզ հաղորդում են, որ Վեհ. Կաթողիկոսն ընդունել է Ախալցխայի յաջորդ Սիոն վարդապետի հրաժարականը և կարգադրել, որ հայր-սուրբն սպասի Սանահնի վանքում մինչև նոր կարգադրութիւն տրվելը: Սիոն վարդապետը 6 տարի էր, ինչ վարում էր Ախալցխայի յաջորդութեան պաշտօնը: Նա անցեալներում մի քանի անգամներ է հրաժարական ներկայացրել պատշաճաւոր իշխանութեանը, բայց նրա խնդիրքը միայն այժմ է յարգվել:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Իտալացիների մօտ

Իտալական խումբը ուրբաթ, մայիսի 21-ին, ներկայացրեց Վերդիի «Ճակատագրի ոյժը» (La Forza Destino) օպերան չորս գործողութեամբ:

Այդ օպերան Թիֆլիսում չէ տրված: Այդ պատճառով երաժշտասէրների համար նա հետաքրքրական էր, իսկ հասարակ այցելուներ զգուշացել են թատրօն գալուց, չը ցանկանալով անորոշութեան մատնված լինել:

Ներկայացումը անցաւ աջող և սահուն: Եւ միայն ցաւել կարելի է, որ հանդիսականների թիւը քիչ էր:

Մեծ աջողութիւն ունեցաւ երգիչ բարիտօն Դանիսէ, որ ունի թէ գեղեցիկ ուժեղ ձայն և թէ երգում է մեծ ճաշակով: Նա կատարում էր Դօն-Կարլօսի դերը: Հասարակութեան պահանջով նա ստիպված եղաւ երկու տեղում կրկնել իր երգած կտորները:

Բաւարար տպաւորութիւն թողեցին երգիչ Պրօկչչի՝ Դօն Ալվարօյի, և երգչուհի Գոլմայեր՝ գնչուհու դերերում:

Անսամբլը ընդհանրապէս նպաստաւոր էր:

Սիրող

—

Սեդրակ Թռասյեանի «Արշալոյս» պիէսի բովանդակութիւնը պէտք է որ յայտնի լինի հասարակութեանը մամուլի անցեալներում հաղորդածից:

Այդ բովանդակութիւնը մի գեղեցիկ տեսութիւն պէտք է նկատէինք Ստեփանոս Նազարեանի կեանքի մասին: Մի կեանք՝ իր բովանդակ աննախանձելի էութեամբ, որպիսին առանձնայատուկ է սոսկ հայ գործչին...

Եւ ճշմարիտ որ, Թռասյեանի յիշեալ պիէսը պատկերացնում է ամբողջովին մեր առաջ 60-ական թւականների շրջանը, երբ Նազարեան և Նալբանդեան առաջին կարապետների դափնին ժառանգելու էին կոչված ռուսահայ գրականութեան պատմութեան մէջ իրանց մեծ ուսուցիչ Խաչատուր Աբովեանից յետոյ:

Այս շահեկան էպօխայի նկարագրութիւնը, կենտրոնացած Նազարեանի կեանքի, նրա ձեռնարկած «Արշալոյս» հանդէսի, հայ հասարակութեան բացասական տիպարների և իդէալիստ գործիչների, ինչպէս նաև այդ հասարակութեան քարասիրտ անտարբերութեան և դատապարտելի վերաբերմունքի շուրջ, յիրաւի կիրառված են Թռասյեանի գրչով, սակայն այդ ամենը պիէսի մէջ ունենալով աւելորդաբանութիւններ, կրկնողութիւններ, աւելորդ տեսիլներ, ծանրացնում են պիէսը, որ վախճանական կէտում պիտի դրամա համարվի, թէև զուրկ լինելով դրամայի իրական պահանջներից:

Զուբալովեան Ժողովրդական տանը մայիսի 21-ին ժողոված բազմութիւնը հաւանեց վերոյիշեալ պիէսի ներկայացումը և մի քանի անգամ բեմ կանչեց հեղինակին: Նաև բուռն ծափահարութիւններ ուղղվեցին դերակատարներին:

Միրզօյեան սկզբից մինչև վերջ սահուն տարաւ Ստեփանոսի կենտրոնական դերը, ի նկատի չունենալով փոքր-ինչ լրջմտութեան բացակայութիւնը յանձին Ստեփանոսի:

Ցամսիկ շատ լաւ էմմա էր և աջող կերպով արտայայտեց նրան իբրև կին և իբրև մայր:

Ալիխանեանի Միքայէլը նպաստաւոր էր իր համար:

Լաւ էին Արարատեան, Դաւիթ-խան, Գուլազեան, Հայկազեան, Յովհաննիսեան, Չիլինգարեան և այլն:

Ներկայացումը աւարտվեց ժամը 1-ից անց, որպիսի հանգամանքը առիթ պիտի տայ անշուշտ հայկական սեկցիային այսուհետև նման երկար պիէսները սկսել ոչ թէ ժամը $8^1/_2$-ին, դեռ չենք ասում մի քիչ էլ անց, այլ ուղիղ 2-ին:

Ե.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Զուբալովի Ժողովրդական Թատրօնում առաջիկայ հերթական ներկայացման՝ հինգշաբթի օրը, ամսիս 27-ին, հայկական սեկցիան բարեհաճ մասնակցութեամբ դերասանուհի տ. Աւետեան-Նազարեթեանի կը ներկայացնէ Զուդերմանի «Թիթեռնիկների կռիւ» 4 գործ. դրաման:

◆ Երեքշաբթի օրը, մայիսի 25-ին իտալական օպերային խումբը Զուբալովի Ժողովրդական Տանը կը տայ Բիզէի «Կարմէն» օպերան: Գները 5—80 կ.:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Գեղարուեստ». գրական, գեղարուեստական, երաժշտական պատկերազարդ հանդէս, № 3. Թիֆլիս, 1910.

«Գեղարուեստի» երրորդ գիրքը կազմված է բաւական ճոխ: Հրատարակութիւնը շքեղ է, զարդարված գեղեցիկ նկարներով և պատկերներով:

Հանդէսը սկսվում է մի քանի յօդուածներով նուիրված գեղարուեստի ընդհանուր բնորոշումներին: Գ. Լ. իր «Էսթետիկական խնդիրներ» յօդուածում քննութեան է ենթարկում մարդուն՝ իբրև գեղեցկութեան ներկայացուցչի և, ամփոփելով ի մի թէ դասական աշխարհի և թէ մեր ժամանակի հայեացքները, եզրակացնում է, որ մարդը ինքը գեղարուեստի հետաքրքրութեան ամենաթանգ առարկաներից մէկն է թէ ֆիզիկական իր ամբողջութեամբ և թէ հոգեկան յոյզերի արտայայտութեամբ:

Մի ուսումնասիրութեան մէջ, որի սկիզբը զետեղված է «Գեղարուեստի» նախորդ համարում, Խ. Սամուէլեան շարունակում է որոնել աշխատանքի գաղափարը հայ ժողովրդական երգերում: Եւ նա բերում է բնորոշ նմուշներ այդ երգերից: Ժողովրդական երգը կրում է իր վրա գիւղական աշխատանքի ռիթմային արտայայտութիւնը: Թէ ճախարակը, թէ խնոցին, թէ ջաղացը, թէ սանդը պայմանաւորում են չափ, ռիթմ, տակտ, եղանակի հիւսւածքը, որի վրա յետոյ աւելանում են և բառերն իրանց իմաստով:

Թարգմանական մի քանի յօդուածներ շօշափում են երաժշտութեան, թատրօնի, քանդակագործութեան վերաբերեալ խնդիրները: Գ. Լ. ծանօթացնում է ընթերցողին հայ պատմական նկարչութեան նիւթերի հետ և ընդգծում է մանրանկարչութեան հոյակապ զարգացումը Ռուբինեանների օրով: Հայերին մանաւանդ աջողվել է տալ հոյակապ գործեր դրուագային մասում օրնամենտացիայի ասպարէզում, որտեղ կան գծագրային հիւսւածքներ բազմազան կապակցութեամբ: Գ. Միրզաեան զետեղել է վրաց թատրօնի անցեալի և ներկայի մի պատմական տեսութիւն: Ատրպետը տուել է Արշակունի դրամների ուսումնասիրութիւն, որտեղ համեմատութեան է ենթարկում զանազան ժամանակների դրամները և ցոյց տալիս արուեստի որակը նրանց մէջ: Ս. Եսայեան ածագրել է երաժշտապետ Մ. Եկմալեանի կենսագրութիւնը և գործունէութիւնը, ցոյց տալով նրա արած գործի խոշորութիւնը և նշանակութիւնը:

Գրական - գեղարուեստական բաժնում նախ աչքի է ընկնում Մ. Մանուէլեանի «Սպիտակ ծաղիկներ» պատմուածքը իր բանաստեղծական-խորհրդանշական հիւսւածքով: Ապա գալիս են չափածոյ և արձակ բանաստեղծութիւններ, որոնք պատկանում են թէ հին ծանօթ և թէ նոր հանդէս եկած գրիչներին: Այդտեղ մասնակցում են Յ. Յովհաննիսեան, Ա. Իսահակեան, Յ. Կոստանեան, Շ. Կուրղինեան, Ա. Նամալեան, Գ. Քեալաշեան, Շահ-Արմէն, Յ. Յակոբեան, Տէրեանց, Յ. Թումանեան, Սիւնի, Զիւանի, Վ. Փափազեան, Ս. Բաբիեան և ուրիշներ:

Գեղարուեստական և պրօֆեսիօնալ զարգացման խնդրին նուիրել է մի յօդուած Յ. Ակուլեան:

Քննադատական բաժնում զետեղված են հետաքրքրական թեմաներ շօշափող յօդուածներ՝ միջավայրի թէօրիայի (Թ. Աւդալբէգեան), գրականութեան մէջ աջող ոյժերի (Կ. Սօլօվեան), մայրենի և օտար գեղարուեստի (Լ. Մանուէլեան), նոր դրամայի (Նար-Դոս) խնդիրների մասին:

Այնուհետև գալիս են յօդուածներ Պետերբուրգի պատկերահանդէսի (Ա. Աթաբէգեան), Մարրի գործունէութեան Անիում (Ա. Խատիսեան), Իւլէ Ֆրապանի (Լ. Բաբայեան) մասին:

Հետաքրքրական են կազմված քրոնիկօնները, որտեղ ամփոփ կերպով հաղորդված են վերջին տարվայ աչքի ընկնող գրական և գեղարուեստական երևոյթները:

Գրքի վերջում զետեղված են պատկերներ, վերցված յայտնի նկարիչների գործերից: Այդ մասում տեղ է գտել և Ներսիսեան դպրոցի նոր շէնքի յատակագիծը իր ֆասադով:

Մանրամասնօրէն կանգ չենք առնում առանձին յօդուածների և երկասիրութիւնների վրա, որովհետև առանձին գրուածքների թիւը չափազանց մեծ է և անհնարին էր նուիրել իւրաքանչիւրին առանձին քննութիւն կամ նկատողութիւն:

Գիրքը թողնում է նպաստաւոր տպաւորութիւն:

Ա. Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 12 մայիսի

Թաւրիզում գոյութիւն ունեցող «Էկօնօմ» ակցիօներական ընկերութեան վարչութիւնը «Մշակի» № 95-ում տպագրել էր տուել «ընկերութեան հիմնադիրների և վարչութեան՝ վաճառականների հետ ունեցած խառն ժողովի եզրակացութիւնը» իբրև պատասխան-հերքում «Մշակի» 74-րդ համարում լոյս տեսած իմ յօդուածի:

Իմ կարծիքով երկու անգամ կազմված ժողովները և նրանց դուրս բերած եզրակացութիւնները էապէս լիակատար չեն, այլ թերի և միակողմանի. ըստ որում բաւական չէր միայն ընկերութեան շահաբաժինների շահակից անձնաւորութիւնների մասնակցութիւնը, այլ և անպայման հարկաւոր էր, որ ծխախոտի մօնօպօլիայի հարցը քննող ժողովներում և հանված եզրակացութիւններում արտայայտվէր նաև Ատրպատականի թեմ. խորհուրդը, որին յանձնված է եղել ծխախոտի մօնօպօլիան և որի հետ են տեղի ունեցել ուղղակի «Էկօնօմ» ընկերութեան վարչութեան գործողութիւնները:

Արդ՝ որովհետև անհրաժեշտ է, որ խնդիրը իր իսկական գոյներով երևան գայ հասարակութեան առաջ, ցանկալի էր, որ թեմ. խորհուրդը, որտեղից ստացել եմ իմ տեղեկութիւնները, ասպարէզ գար և պարզաբանէր խնդիրը մամուլի միջոցով, որից յետոյ ես կը յանձնեմ իմ աւելորդները լրացութեան՝ ինձ ուղղված մեղադրանքների մասին:

Հայկազուն

Թիֆլիս, 18 մայիսի

Կարդացի «Մշակի» № 67-ի «Հայոց պատմութեան դասաւանդութեան մասին» յօդուածը, Գ. Ռուբէնի ստորագրութեամբ: Աչքի առաջ ունենալով Ռուբինեանների պատմաշրջանի հայ դարաւոր կեանքում կատարած դերը, որ հայկական միջնադարեան խաւար իրականութիւնը լուսաւորեց վերածնութեան գաղափարներով, Գ. Ռուբէնու նկատողութիւնը դառնում է օրինական:

Պատմական այդպիսի մի շրջան բաց թողնել ամբողջապէս, կամ յետաձգել՝ ապագայում երկու դասով անցնելու համար, կարծեմ նպատակայարմար չէ հայ միջնակարգ դպրոցներից որևէ մէկին:

Սակայն ցանկալի է լսել և դասատուի կարծիքը այդ հարցի մասին, որովհետև այժմ դպրոցական խնդիրներով զբաղվելը հետաքրքրական է շատերի համար:

Կ. Համալեան

—

Նիժ (Նուխու գաւ.), 18 մայիսի

Մկրտիչ Դալլաքեանցը «Մշակի» № 58-ի

սին առած:

— О, это возмутительно,—դարձաւ ինձ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուն,—իսկ շատ հետաքրքրական է, թէ ինչ է անում Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, ինչու նա այդ հարցի մասին չէ մտածում:

— Այո, պ. հոգաբարձու,—ասացի ես,—իսկ եթէ աչքի առաջ ունենանք, որ տարին այդ դպրոցից աւարտում են 20—25 աշակերտներ, դուրս կը գայ, որ Ներսիսեան դպրոցն աւարտած ամեն մի կիսագրագէտ վարժապետացու հայոց ազգի վրա նստում է ամեն տարի ոչ աւել և ոչ պակաս քան 4000 րուբլի:

Հոգաբարձուս սոսկաց, տեղից վեր թռաւ և մազերը բռնեց:

— Գիտէք ինչ,—ասաց նա,—համալսարանում ամեն մի ուսանող նստում է պետութեան վրա միայն 2500 րուբլի:

— Այո, պ. հոգաբարձու, շատ ճիշդ էք ասում, բայց որտեղ համալսարանը, որտեղ «հայկական Սորբոնը», հանգստացրի ես նրան:

Եւ այս ասելով ես հանեցի ծոցիցս երկու նամակ, մէկը՝ ռուսերէն, միւսը՝ հայերէն. նամակի ամեն տողի տակ մի քանի կարմիր գծեր կային:

— Դա ինչ է,—հետաքրքրվեց հոգաբարձուն:

— Սրանք, պ. հոգաբարձու, երկու նամակներ են, որ գրել են Ներսիսեան դպրոցի սաները—մէկը՝ հայերէն, միւսը ռուսերէն:

— Եւ դրանք սխալներն են:

— Ինչպէս տեսնում էք, պարոն հոգաբարձու,—ասացի ես սառնասրտութեամբ:

Նա առաւ, նայեց և ասաց:

— Վաղն իսկ ես տալիս եմ իմ հրաժարականը:

Ես ամեն կերպ համոզում էի նրան չանել այդ յիմարութիւնը, իսկ նա բռնած մազերը՝ յետ ու առաջ էր գնում սենեակում և ասում.

— Нѣтъ, это возмутительно, պէտք է մի հիմնական, արմատական միջոց փնտռել. և ես կը լինեմ առաջինը, որ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ կը քննադատեմ ողջ հոգաբարձութեանը, ուսուցչական կազմը, աշակերտութեանը, բոլորին և բոլորը...

— Ես էլ հէնց այդ էի ուզում,—ասացի ես, վերցնելով գլխարկս,—ես ցանկանում էի, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուն կարողանայ քննադատել Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը և ոչ թէ ընտրական ժողովներ անի, ցոյց տալու համար թէ ինչքան բարձր, լաւ, հրաշալի են գնում գործերը Ներսիսեան դպրոցում:

Նա խոստացաւ ինձ՝ այդ անպատճառ անել:

Եւ ես սպասում եմ դրան:

Դրան սպասում է Թիֆլիսի ողջ թեմը:

Ո՛չ, աւելին կասեմ.

Ողջ հայոց ազգը...

Սար-Ման

ցաւառական տեղեկութիւնների բաժնում գրում է, թէ տեղիս դպրոցական կեանքը այս տարի կաղում է և թէ հոգաբարձութիւնը թոյլ է վերաբերվում իր ստանձնած պարտականութեանը։

Զուգելով այստեղ թւել այն իսկական հանգամանքները, որոնք դրդել են լրատուին այդպիսի աննպաստ, բայց և անճիշտ տեղեկութիւն տալու լրագրութեանը մեր դպրոցի վերաբերմամբ, հարկ ենք համարում յայտնել, որ տեղիս ծխ. դպրոցը վերաբացվելուց յետոյ ամենաաջող տարին համարվում է այս ուսում. տարին՝ թէ ուսուցիչների, թէ աշակերտների առաջադիմութեան, թէ դպրոցի բարեկարգ դրութեան, թէ հոգաբարձութեան աջող ընտրութեան և թէ նիւթականի ապահովութեան տեսակէտից։ Միակ տարին է, որ ժողովուրդը հետաքրքրվում է գրաւվելով դպրոցում տեղի ունեցող աշակերտակ. հանդէսներով, որի համար դպրոցը առաջին տարիներում խորթ է եղել և իրաւունք չէ համարել իրան նրա բակը մտնելու։

Նախագահ հոգաբարձ. և գործակալ՝
Վ. քհ. Ծատանեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 մայիսի

ԲՐԻՒՍԵԼ։ Կայացաւ ցուցահանդէսի ընդհանրապէս չաւարտված ֆրանսիական բաժանմունքի հանդիսաւոր բացումը։ Ներկայ էին մինիստրները և շատ եկւորներ Պարիզից։

ՊՕԼՕՑԿ։ Գեղեցիկ եղանակի ժամանակ կայացաւ գերապատիւ Եփրոսինիայի նշխարների հանդիսաւոր ներմուծումը քաղաք։ Հանդէսը, ժողովրդի ամբոխների ուղեկցութեամբ, բռնել էր համարեա երկու վերստ։ Կանաչներով և դրօշակներով զարդարված քաղաքում հոգևորականութեան առջևից գնում էին Վօլինսկի արքեպիսկոպոս Անտօնի և Պօլօցկի եպիսկոպոս Սերաֆիմ։ Հանդէսին ուղեկցում էին Մեծ Իշխան Կօնստանտին Կօնստանտինօվիչ, Իշխան Իգօր Կօնստանտինօվիչ, բարձր իշխանութիւնները։ Հանդիպման տեղում սարքված էր վրան, որի մէջ սպասում էին մասունքներին յունաց Թագաւորը, Մեծ Իշխանուհի Ելիզավետա Ֆեօդօրօվնա, Կիեվի միտրօպօլիտ Ֆլավիան։ Օգոստափառ անձինք ամբողջ ճանապարհը գնում էին ոտով։ Հանդէսի վերջում ընթանում էր կադէտների կորպուսը դրօշակով, որ տանում էր իշխան Օլէգ Կօնստանտինօվիչ։ Բոլոր եկեղեցիներում լսվում էր զանգահարութիւն։ Առաւօտեան կադէտների կորպուսում հանդիսաւոր կերպով օծվեց գեներալ «Կօնդրատէնկօի կիսարձանը։ Հանդէսի վերջը Օգոստափառ անձանց և հիւրերին առաջարկվեց նախաճաշ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Եկաւ ճապօնական պրինց Ֆուշիմին իր շքախմբի ուղեկցութեամբ։

ՌՕՍՏՕՎ Դ./Վ.։ Խօլերայի սկզբից հիւանդացան 12, մեռան 3 հոգի։

ՍՕՖԻԱ։ Յանկարծամահ եղաւ հեռագրական Գործակալութեանս թղթակից Մօլօտօվը։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիական աւիատոր Ռօլս Դուվրից թռաւ Լամանշով, հասաւ Ֆրանսիական ափին Սանգատտի մօտ և վերադարձաւ առանց Դուվր իջնելու։

ՊՕԼՏԱՎԱ։ Մայիսի 9-ից նահանգում խօլերայով հիւանդացան 21, մեռան 8 հոգի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինուորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ։
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տէլէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը $9^{1}/_{2}$-ից մինչև 5-ը ցերեկվայ։

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։

ԲՕԺՕՎՍԿԻՅ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։

ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.։

ԳՐԷՑՑ—աչքի հիւանդութիւն., ամեն օր 2—3 ժ.։

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—2 ժ.։

ԿԱԼԱՄԿԱՐՕՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից։

ՆՕՎԻԾԿԻՅ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։

ՌԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը։

ՊԱՎԼՕՑԿԻՅ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.։

ՕՆԻՏՐԱՁԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։

ԿԻՆ ԲԺ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։

ԱՍՓԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։

ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻԾԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ $11^{1}/_{2}$—$12^{1}/_{2}$ ժ. ցեր.։

ՇԱՄԱՇ—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։

ՉՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրօթերապիա., երկուշ., չորեքշ. և ուրբաթ, ցեր. ժ. 4—5-ը։

ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ $9^{1}/_{2}$—$10^{1}/_{2}$ ժ. առ.։

ՊՕՆԴՕԵՎ—Ջղային հիւ. և էլեքտրօթերապիա. ամեն օր, ժամը 11—12-ը։

ԼԻՄՕՆԻ ատամնաբոյժ—ամեն օր՝ 9—$11^{1}/_{2}$ ժ. առ.։

Համախորհուրդ, օպերացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնօզ, ստնտուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազոտութիւն ըստ Wassermann-ի։

(կ.) 356. 100—35

ԲԺՇԿԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչև սեպտեմբեր։ Верхній бульваръ, д. кн. Гирей.

(ե. հ. կ.) 565. 0—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելյամինօվսկայա փող № 8

(օ. մ.) 564. 100—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տէլէֆօն № 40.

(ե. ու. կ.) 984. 100—91

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՊԵԱՏԻԳՕՐՍԿ,
ուր ամառը կընդունէ հիւանդներին։
Սիֆիլիս, միզասեռական և վեներական հիւանդութիւններ։

(ե. հ. կ.) 955. 100—94

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранie) ևայլն։ Էլեկտրականութիւն րէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Խորհուրդը 50 կոպ.։ Ընդունելութիւնը՝ կանանց—3—$3^{1}/_{2}$ ժ., տղամարդանց—$3^{1}/_{2}$—$4^{1}/_{2}$ ժ.։ Семеновская ул., № 9.

(կ. հ.) 77. 50—32

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Золотая медаль Лондонъ 1893 г.


ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ!
ПРОВИЗОРА
Г. Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ И ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1/1 кус. 50 к. 1/2 кус. 30 к.

Главн. складъ у Г. Ф. Юргенсъ, Москва

(М. 4375) 21. 24—9

Պատրաստ է տպագրութեան համար
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ
Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԵՒ Ս. ՇԱՀԱԶԻԶԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ

Ընդարձակ ներածութեամբ՝ «Ռուսահայ վերածնիչների սօցիալական դաւանանքի բնոյթը»։
(Սօցիօլօգիական վերլուծութիւն)
Մօտ 350—400 երես.

(օ. մ.) 613. 3—1



(П. 43004) 447. 10—9

Հրաւէր

Կիրակի, մայիսի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, Զգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցում երրորդ անգամ նշանակված է ծխական ընդհանուր ժողով։ Զբաղման առարկաներն են.

1) Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան կոնդակի ընթերցումը, դպրոցիս բացման առիթով։
2) 1906, 1907, 1908 և 1909 թ. թ. եկեղեցու հաշիւները և վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը։
3) Դպրոցի 1908—09 ուս. տարվայ հաշիւը։
4) Ընտրութիւններ երեսփոխի և մի հոգաբարձուի։
5) Գանձանակի վերացման խնդիրը։
6) Տիրացուների հարցը։
7) Ընթացիկ հարցեր։
8) Այդ օրը նշանակված է և Ներսիսեան դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող պատուիրակների ընտրութիւնը (առաջին անգամ)։

Նախագահ հոգաբարձութեան՝
Ա. քահ. Մինասեան
Անդամ-քարտուղար՝ Յ. Շահնազարեան
597. 1—1

Հրաւէր

Թեմիս գերապատիւ սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն, այսօր, կիրակի, մայիսի 23-ին, ժամը 12-ին, Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցում նշանակված է ծխական ընդհանուր ժողով ընտրելու 2 պատուիրակ և 2 անձնափոխանորդ Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու։ Ուստի հրաւիրում եմ Վանքի աւագ եկեղեցու ծխականներին շնորհ բերել յիշեալ օրը և ժամին Վանքի ա. եկեղեցին։

Ժողովը առաջինն է և օրինական կը համարվի, եթէ ծխականների $^{1}/_{5}$ ը ներկայ լինի։ Չը կայանալու դէպքում՝ երկրորդ եւ վերջին ժողովը կը հրաւիրվի եկող կիրակի, մայիսի 30-ին, և օրինական կը համարվի, որքան և լինի ներկայ եղող ծխականների թիւը։

Թիֆլիսի Վանքի ա.-եկեղեցու աւագ երէց՝
Նշնիկ ա. քահ. Երզնկեանց
602. 1—1

Հրաւէր

Կիրակի, մայիսի 23-ին, առ. ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ, Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցում կը կայանայ մայիսի 16 ի ծխ. ընդհ. ժողովի շարունակութիւնը։

Օրակարգ.

1) Ծխական տուրք սահմանել համաձայն Կովկասի Փոխարքայի ժամանակաւոր կանոնների։
2) Զեկուցումն կալուածների, Վանքի աւագաբեր կղզիների և հանգ. բժ. Վահրամեանի կտակի մասին հոգաբարձութեան որոշումների քննութիւնը և վաւերացումը ընդհանուր ժողովից։
3) Ծխական նորաբաց դպրոցի նախահաշւի քննութիւնը և վաւերացումը ծխական ընդհանուր ժողովից։
4) Եկեղեցու նախահաշւի քննութիւնը և վաւերացումը ծխական ընդհանուր ժողովից։

Նախագահ ծխ. ընդհանուր ժողովի՝
Ն. Տիգրանեան
Հոգաբարձութիւն
603. 1—1

Հրաւէր

Համաձայն վիճակաւոր առաջնորդի կարգադրութեան, այսօր, կիրակի, մայիսի 23-ին, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծխականների ընդհանուր ժողով՝ ընտրելու համար երկու պատուիրակներ և երկու փոխանորդներ, որոնք պէտք է կատարեն Ներսիսեան դպրոցի 6 հոգաբարձուների և թեմական խորհրդի անդամների ընտրութիւնը թեմի միւս պատուիրակների հետ։

Մողնու եկեղեցու
Սիմէօն ա.-ք. Զմշկեանց
(ու.կ.) 582. 2—2

Այլեւս չը կան հիւանդներ

Եթէ Դուք իսկապէս կամենում էք բժշկվել սիֆիլիսից, տրիպպէրից, շանկերից, բէլից, սեռակ. թուլութիւնից, չրբըրից և կամ Ձեր առողջութիւնը քայքայված է օնանիզմից—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան տղամարդ. և կանանց սեռակ. անդամների գաղտնի հիւանդութիւնների» անունով գիրքը, բաւականաչափ նկարներով և դեղատոմսերով, բաղկացած 250 էջից։ Գինը վերադիր վճարով և ճանապարհած. 1 ր. 50 կ.։ «Ժողովրդական բժշկարան», ձեռնարկ առանց բժշկի օգնութեան բոլոր հիւանդութիւններից բժշկվելու համար (բացի գաղտնի հիւանդութ.), մեծերի և երեխաների համար, բաւականաչափ դեղատոմսերով, էջ մօտ 250, գինը՝ վերադիր վճար. և ճանապարհած.—1 ր. 50 կ.։ Երկու գրքերը միասին—2 ր. 60 կ. (կարելի է նամակադրոշմով)։ Նախապաշտ. բժշկարան անասունների համար, էջ 300, գինը 1 ր. 60 կ.։ Միակ պահեստը՝ С.-Петербургъ, Офицерская, 50—213. Ф. Словаку.

(23, 6) (П. 55182) 543. 2—1

ՀՐԱՒԷՐ

Այսօր, կիրակի, մայիսի 23-ին, ս. պատարագից յետոյ, առաւօտեան ժամը 11-ին «Թանդոյեան» ս. Աստուածածնի եկեղեցում կայանալու է ծխականների ժողով, երկու ներկայացուցիչների (պատգամաւոր) և երկու անձնափոխանորդների ընտրութեան համար, որոնք պիտի մասնակցեն Ներսիսեան դպրոցից, հերթով հեռացող վեց հոգաբարձուների ընտրութեանը։

Ընտրված պատգամաւորները արտօնութիւն ունեն ընտրելու և թեմական խորհրդի նոր անդամներ։

Նաև կը քննվեն մի քանի հարցեր եկեղեցու վերաբերմամբ։

Ծխատէր Ներսէս ա.-ք. Ղամազեան
608. 1—1

Հրաւէր

Կիրակի, մայիսի 23-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Քամոյեան ս. Գէորգ նորակառոյց եկեղեցում կայանալու է ծխ. երկրորդ ընդհանուր ժողովը։

Օրակարգ.

1) Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ դպրոցի բացվելու առիթով ստացված՝ կոնդակի ընթերցումը։
2) Հոգաբարձութեան գործունէութեան զեկուցումը։
3) Վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը։
4) 1909 թ. հաշւի և 1910 թ. նախահաշւի քննութիւնը և հաստատութիւնը։
5) Դպրոցական գործունէութեան զեկուցումը։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու
Հոգաբարձութիւն
(ա. օ.) 583. 3—3

ԾԱԽՎՈՒՄ Է
ԲԱԿԱԼԷՅՆԻ ԽԱՆՈՒԹ
ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԶԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ։
Միխայլօվսկի պրօսպ. № 36.
(ա.օ.) 609. 3—1

Հրաւէր

1910 թ. մայիսի 23-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 11-ին, Քամոյեան ս. Գէորգ նորակառոյց եկեղեցում, համաձայն հոգևոր իշխանութեան կարգադրութեան, կայանալու է ծխական ընդհանուր ժողով՝ ընտրելու երկու պատուիրակ և երկու անձնափոխանորդ, որոնք մասնակցելու են Ներսիսեան դպրոցի հոգաբարձական և թեմական խորհրդի ընտրութիւններին։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու միաբան՝
Յովհաննէս ա. ք. Մարտիրոսեան
(ա. օ.) 584. 3—3

ՀՐԱՒԷՐ

Թիֆլիսի թեմի բարձր սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն, ամսիս 23-ին, կիրակի, ժամը 12-ին ս. պատարագից յետոյ Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցում նշանակված է ծխական ժողով, որ պէտք է ընտրէ 2 պատգամաւոր և 2 անձնափոխանորդ Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի հոգաբարձուներ և թեմական խորհրդի անդամներ ընտրելու համար։

Նոյն օրը կատարվելու է դպրոցի հոգաբարձութեան, ուսուցչական կազմի և աշակերտուհիների ներկայութեամբ հոգեհանգիստ հանգուցեալ Կարապետ Վարդանեանցի գերեզմանի վրա, որ գտնվում է եկեղեցու գաւթում։

Ուստի հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծ. ծխականներին շնորհ բերել եկեղեցի յիշեալ ժամին։

Սարգիս աւագ-ք. Շիօյեանց
(ա. օ.) 604. 2—2

Հրատարակութեամբ երևանի «ԱՐԱՐԱՏ» գրավաճառանոցի տպագրվում է և շուտով լոյս կը տեսնի Յ. Տէր-Մարտիրոսեանի և Ռ. Օհանջանեանի կազմած

ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

համաձայն «Հայոց եկեղեցական տարրական դպրոցների ուսումնական ծրագրի»։
(կ. հ.) 559. 3—3

Գեղարվեստ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
Պատկերազարդ հանդէս
◆ Թիֆլիսում ◆

Խմբագրութեամբ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ

Լոյս են տեսել Ա. Բ. և Գ. գրքերը. խմբագրվում է Դ. գիրքը։ Բաժանորդագինն է՝ 10 գիրքը 10 ր., 5 գիրքը 7 ր.։ Օտար տեղեր իւրաքանչիւր գրքին 25 կոպ. պօստի ծախս։ Հատավաճառ ամեն տեղ 2 ռուբլի։

Լոյս տեսած համարները 3-ը միասին 5 ռուբ.

Խմբագրութեան հասցէն՝ Чавчавадзевская № 20. Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ. редакція „Гехарвестъ" կամ почт. ящ. № 133.

Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրվել նաև «Գուտտենբերգ» գրախանութում, տիկ. Վարվառէ Միլեանի մօտ (Паскевича № 4) և տիկ. Վարդանեանի Ծաղկոցում (Лермонтов. № 21)։

Կիրակի, մայիսի 23-ին, առաւօտեան ժամը 10-ին
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Абасъ-Абадская, соб. домъ)
կայանալու է

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգի խնդիրն է.
Ընկերութեան ճիւղեր բանալը Բագւում, Բաթումում, Նոր-Բայազէտում, Ալէքսանդրապօլում և Կովկասի այլ վայրերում, ըստ կանոնադրութեան § 43-ի։
Անդամավճարը 3 ռուբլի է։ Անդամագրվել կարելի է նիստի օրը դահլիճ մտնելիս։

Այգի ✲ „ԻԺԱՆԷ" ԸՆԿ. ✲ Ճաշարան

Վրաց ամառային թատրոնին կից, մուտքը աջ կողմից՝ գալլերէայի միջով։
Ամեն օր՝ ցեր. ժամը $1^{1}/_{2}$-ից մինչև $4^{1}/_{2}$-ը և երեկ. ժ. $8^{1}/_{2}$-ից մինչև գիշ. ժ. $1^{1}/_{2}$-ը
նուագում է Աւստրիայից եկած վիէննական կօնցերտային լարանուագ

ԿԱՆԱՆՑ ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԲԸ

տիկին ՊԷՇԼԻ ղեկավարութեամբ։

ՃԱՇ և ԸՆԹՐԻՔ։ Ճաշը ցեր. ժամը 1-ից մինչև ժամը 5-ը.—2 տես. կերակուր՝ 50 կ., 3 տես. կեր.՝ 75 կ., 4 տես. կեր.՝ 1 ր.։ Տրվում է ճաշ նաև տների համար։ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ։ Ճաշարանին կից կան երեք հատ նորագոյն ԲԻԼԻԱՐԴ և ՆԱՐԴԻ։ Ընդունվում են պատուէրներ թէ այգում և թէ դրսի համար—հարսանիքների, պիկնիկների, ճաշի, ընթրիքի և այլն, ամեն քանակութեան։ Տեղական պատուէրների համար այգին ունի միանգամայն մեկուսացած ծածկված ռոտոնդա և բաց տարածութիւն մեծ ընկուզենիների տակ։ Տրվում է վարձով սեղանատան սերվիզ։ Տէլէֆօն № 812.
ԱՅԳՈՒ ՄՈՒՏՔԸ ԶՐԻ Է։ 461. 10—7

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետևեալ նոր գրքերը.

Գարուն. Գրական-Գեղարուեստական Ալմանախ I.	գինը 1 ր. —
Աճառեան. Մոխիրների տակից	» — 40 կ.
» Անդունդը	» — 40 կ.
Ինչ պէտք է իմանայ դեռատի աղջիկը	» — 70 կ.
Մասիսեանց. Տր. ք. Շուշանիկ, պատկեր հինգերորդ դարի հայ կնոջ.	» — 15 կ.
Աբրահամեան. Պղպջող ծառերի թշնամիները, 41 նկար.	» — 35 կ.
» Հողի պարարտացումը	» — 15 կ.
Բարխուդարեան. Գործնական ձեռնարկ մեղուաբուծութեան, 26 նկար.	» — 25 կ.
Եսայեան. Տղամարդի տրիպէրը և նրա բժշկութիւնը, պատկերազարդ	» — 20 կ.
» Տղամարդի սեռական կեանքը	» — 30 կ.

Օտար քաղաքներից պէտք է դիմել. въ Тифлисъ, Центральной Книжной Торговлѣ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
„ՆԱՐԶԱՆ" | „ԷՍՍԵՆՏՈՒԿԻ №20"

Սեփականատէր

Առ. և Ա. Մ.

Զգուշացէք կեղծումներից!

Բուժիչ: ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19։ ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՕՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։ ՀԵՂՈՒԿ ԱԾԽԱԹԹՈՒ, միանգամայն մաքուր, ստացված կիսլօվօդսկի «Նարզանից»։

ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, № 10.
Ածխաթթւի պատուէրների և մանրամասն նկարագրութիւնների ու պրէյս-կուրանտների համար դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.

(22,23,26,29) (М. 174920) 599. 4—2

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.